Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24371

891.99-192
Г-51

1890

4 P. 20 03

ԻՆԱԻ

ԿԱՐԷՆԻ ՍՐԻՆԳԸ

ՍԻՐՈՅ ԵՒ ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Երբ ես եղայ վեպի երգի յօրինիչ,
Էօժէն-Սիւն սկսեց զաղտ ապրել զրնչ
Երգ։ 43

891.542-191
Ի-46

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանի
Типографія М. Вартанянца, Троиц. пер.
1890

5316

ԻՆԱԻ

ԿԱՐԷՆԻ ՍՐԻՆԳԸ

ՍԻՐՈՅ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

891.99-192
Ի-51
100
36250

Երբ ես եղայ վեպի՝ երգի՝ յօրինելոյ,
Էօժէն-Սիւն սկսեց գաղտ ապրել, գրել։
Երգ։ 45

ԹԻՖԼԻՁ
Տպարան Մովսէս Վարդանեանի
Типографія М. Вартапянца, Троиц. пер. д. № 11
1890

2451

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Октября 1890 г.

1

ԻՄ ՍՐԻՆԳԸ

(Մեծդեղ եղանակով)

Թռչող փչէ սրինգս տխուր ու անձայն,
Քանի դու տրտում ես, տրտում եմ՝ սրինգ,
Կարելի է խնդան մարդիկը համայն.
Ես էլ նորանց հետը խնդում եմ. սրինգ։

Ոչխարների համար կարապետ ես դու,
Քնարների մէջը նահապետ ես դու.
Սիրած Հովիւներիդ վարժապետ ես դու,
Դորա համար ես էլ ցնծում եմ, սրինգ։

Մի՛ ասեր, ինձ համար եղ չես պատրաստել,
Իմ կենաց համար դեղ չես պատրաստել,
Ձայնս անուշ գալու տեղ չես պատրաստել,
Կարելի է ասեն ինձ դդում, սրինգ։

Դու փառք տուր յաւիտեան, ունիս քաղցր ձայն,
Ճանաչէ՛ք ո՞ տերդ, թէ ունիս սիրտ լայն.
Ինային էլ ունի գոհացող բերան.
Ինչպէս թարգմանվում է իմ սիրուն սրինգ։

(Ղոշմայ)

2

Զ'տեսայ քո դէմքդ՝ տեսայ պատկերդ,
Մնալով թէրուսս կիսկատար, Ռաֆֆի,
Երանէ՜ ծնողիդ՝ ջանքիդ ու մտքիդ
Ունէր քեզ պէս զաւակ, անսատար Ռաֆֆի։

Դու գովեցիր, որին արժան էր գովել,
Կամ ցոյց տուիր, ում արժան էր դսրովել.
Քո էլ սիրտդ շատ վաղուց էր խորովել.
Որդիներիդ թողիր անկատար. Ռաֆֆի։

Ոսկորներդ ջրէ երկնային ցողը,
Թէ համբուրեմ քո տապանի սառ հողը.
Ես կ'լինեմ փոշիներիդ լաւ գողը
Գուցէ առնեմ շնորհ, անդադար Ռաֆֆի։

3

ԹՈՓԽԱՆԱՑ ՏԻՎԱՆԻ

Երջանիկ է այն պարտէզը, որ լաւ պարտիզպան ունի,
Հողը փորող, ծառեր տնկող մշակ ժրաջան ունի
Լայն ու ուղիղ կամ մաքրուած ընդարձակ առուին վերայ
Զօր ու գիշեր կանգնող ու աշխատող ջրահան ունի։

Պարտիզպանի պարտքնէ մաքրել այգին, տատասկից. փշից,
Կանանչներով զարդարվելուն համար լրահան ունի։
Բաժին հանելով ամեն օր թէ դեղէից և թէ նշից,
Չի կորցնում ոչ մի օգուտ, երբոր գրահան ունի։

Թէ մահդ մօտ է Ինաի, գոհացիր քո արարչին
Գերեզմանիդ հորի համար, տէրդ քարահան ունի։

4

ՏԻՐԱՄՈՐ ՊԱՏԿԵՐԻ ԴԷՄ.

(Դիվանի)

Ինձ մի տանջիր ով ընտիր կոյս, դու ես լոյսս անարատ.
Կամ մինչև ե՞րբ մնամ խաւար, դու ես լոյսս անարատ,
Լոյս տուր ինձի լուսաւորիմ լուսով ճրագի նման.
Անմեղ դրախտից դուրս եկած դու ես բոյսս անարատ։

Դու ես պարծանք, դու ես պատիւ ինձի նման տկարին,
Դու գաւազան ես ինձ համար և իմ ոյժս անարատ,
Օգնէ՛ ինձի գէթ միանգամ քեզի յարգող անճարին,
Ես ալ մէջն եմ այն աշխարհին որին կոյս ես անարատ։

Ով որ քեզի չի ընդունել իրեն ընտիր բարերար
Կարող ես դու դատապարտել նորա խոյս ես անարատ
Գոհանալով քո Ինաին փառք կ'տայ միշտ անդադար,
Որ լոյս տուիր խաւար սրտին, չեղաւ անուս, Անարատ,

5

ԴԻՎԱՆԻ

Երանի կ'տայ Մարգարէն հարազատ եղբայրներուն,
Որ մօրերիցը ծնուելով, կարուել են սիրոյ կարով.
Պահում են անմեղ քոյրերին, պատվում են ծնողներուն,
Թէ այդ կեանքը միշտ ունենան, ապրում են հազար տարով,

Որչափ որ կարճէ այս կեանքը, կրկին անուշ է մեզի,
Զենք մտածեր գերեզմանը. մի նշան ունենք քարով.
Կամ ծերութեան ժամանակդ գիտցիր որ ուշէ քեզի.
Դու չես կարող նոր կեանք առնել անցնել Մասիսի սարով։

Քանի որ ունիս ժամանակ, Ինաի բարի գործէ,
Երբ կորուցիր ժամանակդ, դու էլ գնա շատ բարով,
Պնդէ եղբայրական կապը. ու քանդելը մի փորձէ,
Երբոր կարես էլ չես ապրել ոչ կորեկով ոչ գարով։

6

ՍՈԽԱԿԻՆ

(Ղազմայ)

Հերիք տրտմիս ու լաս միշտ զոր ու գիշեր,
Կարմիր վարդի վերայ ողբաս դու սոխակ
Քանի դու սիրեցիր նա քեզի ատեց,
Կրկին նորա համար սգաս դու սոխակ։

Վարդդ զով պարտէզում դրել է արմատ,
Կանանչ կոկոնները շատ ու շատ հաստատ.
Քո անուշիկ ձայնդ է նրան կատակ,
Ու կրկին բացուելուն ըղձաս դու սոխակ

Նա հօտ ունի, և գոյն ունի շատ կարմիր
Դու լալկան ես նորա համար մի տանջիր
Մի անգամ էլ Ինաիին դու լսիր.
Ի զուր տեղը միշտ կը ցանկաս դու սոխակ։

7

ՈՒՍԱՆՈՂ ՕՐԻՈՐԴԻՆ

(Ղազմայ)

Ո՛վ դու լաւ ուսանող սիրուն օրիորդ
Աշխատէ որ լինիս ընտիր ու լաւ մայր,
Պարկեշտութեան տիպդ ուղիղ պահպանէ
Որ բուսնիս քո տան մէջ հաստատ բարի ծառ։

Աստուած ինչ տուել է, փառք տուր դու նրան։
Պարապ ծախս մի անիր քո դէմքի վերան.
Քեզ համար տուն շինէ և ոչ թէ վրան
Շարէ հիմիդ մէջը շատ ապառաժ քար։

Թէ չես լսեր Ինաիի խրատը
Կորցնելով տունդ., կնկնես դդեակը.
Կ'թոռմեցնես դէմքիդ սիրուն պնակը.
Քաղցած մերկ մնալով կ'երթաս սարեսար։

8

ՈՒՍԱՆՈՂԻՆ

(Ղազմայ)

Ուսանող պատանի փառք տուր արարչիդ,
Որ հիմայ ոսկեզօծ լուսաւոր դար է,
Թէ ջանաս հետևիլ խոհեմ ուսուցչիդ,
Գիտցիր քո ապագան, փառաւոր դարէ։

Մի հետևիր կեղծ ու պատիր գործերի,
Անվայել՝ անպատշաճ կամ վատ փորձերի։
Չես կարօտել բնաւ բաճկօն ձորձերի
Եթէ հետևեցար, ահաւոր դար է։

Սիրէ քո ընկերդ, ինչպէս մարդ սիրէ,
Եւ քո ծնողներդ գլխիդ զարդ սիրէ
Մի պարկեշտ օրիորդ սրտիդ վարդ սիրէ
Երբ կորչի Ինային, խօսքը նոր տառ է։

9

ՂՈՇՄԱՅ

Այսօր այսօր՝ էգուց էգուց՝ ըսելով
Ունեցած յոյսերիս մրուրը մնաց,
Պաղպաղ սառոյցները՝ արիւն կարծելով.
Անշարժ երակիս մէջ այդ ջուրը մնաց։

Պարզ ճակտիս վերայ անգութի նման
Թողիր խորշոմների մի քանի նշան,
Քեզ համար ամօթ չէր երեսիս վրան,
Քսածդ սև ներկը ու մուրը մնաց։

Միթէ քեզի համար չէի հարազատ,
Չէ՞ կարող լինել. քեզանից ազատ,
Քանդեցիր խրճիթս ով իմ պայազատ.
Ինձի ժառանգութիւն հին դուռը մնաց

10

Ղ Ա Զ Է Լ

Հիւանդ ու տկար Աբգարը Յիսուսին գրեց նամակ,
Խնդրեց, գալ իրեն բժշկել հիւանդութեան ժամանակ,
Երբ ստացաւ փրկող տէրը, փառք տուեց ու գոհացաւ.
Թէ Հայր Աստուած աշխարհի տէր, չ՚մնաց որդուդ փափագ,

Ինձ հասել է ճգնաժամը, փառաւոր է քո որդին,
Ահա անհաւատ Աբգարը, ինձ անում է աղաղակ,
Միայն ինձ համար շատ ծանր է չ՚տեսնել իմ սիրածին։
Այսինքն Երուսաղէմից դուրսը մեռնել անարատ։

Աբգարը սիրում էր Հայաստան, Յիսուսը Երուսաղէմ,
Կարծելով թէ երբ հեռանան գուցէ մտնի աւազակ.
Յիսուս ասաց, Երուսաղէմ արիւնս ծոցդ թափեմ,
Թող Աբգարը քիչ սպասէ, կամ ունենայ լաւ հաւատ։

11

ՂՈՇՄԱՑ

Որչափ որ ինձ ատես դու դեղեցիկ կոյս.
Կրկին դու ես իմ փառքս ու պարծանքս
Քանի չանաս փախչել և կամ թէ տալ խոյս,
Ամենի մօտ դու ես իմ գովասանքս։

Քեզ համար ման կ'գամ ձորեր ու սարեր.
Սիրոյս դէմը հալան ապառաժ քարեր,
Մի՛ հաւատար թէ կան վատեր կամ չարեր
Սիրոյդ համար թափվում է իմ այս ջանքս

Ո՛վ դեղեցիկ կոյս խօստացար սիրել.
Եթէ ոչ չես սիրել, գոնէ չը ատել.
Կամենում էիր դուն Ինաին զատել,
Կարել պէտք է ինձի սիպտակ պատանքս։

12

ԳԻՆԻՆ.

(Ղոշմայ)

Անուշ կարմիր գինի ինձ հարբեցուցիր,
Գաւաթներդ լիք-լիք մնում են հիմայ.
Գիտեմ, քեզ մզողին դու կշտացուցիր.
Որ շատ տակառներդ գնում են հիմայ։

Այգիներդ շատ՝ ողկոյզներդ շատ,
Տհաս ու հասունդ ջոկվում են զատ զատ.
Քեզի խմողներն են փողատէր, ազատ.
Քնել, սթափել են, քննում են հիմայ։

Քեզ համար համբեցին շատերը փողեր,
Ջ'ծծելով քեզի ստացան դողեր,
Ինաին քեզ համար թէ ճարեց դողեր
Ափսոս որ նրանք էլ ջրում են հիմայ

13

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐԻՆ

(Ղոշմայ)

Ամենօրեայ ընկեր արի՛ ինձի տես,
Քեզ ինձ կարծում էի հոգևոր եղբայր,
Ատեցի շատերին սիրեցի քեզի.
Քեզ համար ոչինչ էր, իմ խնամող հայր,

Այդ չա՞փ էր քո սերը անգութ, դաւաճան,
Իմ փողս պարպեցաւ, դո՛ւ եղար գազան.
Բայց երբ չունիմ քեզի յարմար գաւազան.
Պէտք է փախչեմ գնամ հեռու լեռան ծայր։

Աղարտեցիր ընկերութեան անունս
Մոռացար մարդկութեան կարգս, կանոնս.
Կորեցիր իմ հայս, ծծիր արիւնս.
Ուրացուցիր Ինաին, եղբայր, քոյր ու մայր։

14

ՍԻՐՈՒՆ

(Ղոշմայ)

Կարմիր վարդի նման շրթունքդ սիրուն
Են՝ տուն քանդող արիւն թափող աչերդ,
Միշտ սրբում են սև մազերդ քրտինքդ,
Սիրահարիդ կեանքն է քակող աչերդ։

Կոկոնները ծոցդ կարմիր սպիտակ
Անմեղութեան պատկեր ունիս, աղաւնեակ
Զ'բացուած կոկոնիդ եմ, երգիչ սոխակ
Մի պահիր փշի մէջ, լափող աչերդ։

Ինաիդ վառվում է քո սև նշանից,
Ես սէր եմ ցանկանում մաքուր բերանից
Անմեղ սրտով մէկ համբոյր տուր քեզանից
Արի ցոյց տուր, հուր ծաւալող աչերդ։

15

ՂՈՇՄԱՅ

Մի գեղեցիկ տեսայ վերին թաղի մէջ,
Ամբողջ մեր քաղաքի հաւասար է նա.
Լուսին էր աչքերը, արև էր դէմքը.
Անտէր աղքատներին հոգատար է նա.

Եթէ կրկին տեսնեմ հոգւով կ'խնդամ,
Հրաւէրներ կ'տամ պարեմ, կ'ցնծամ.
Լուսաշող պատկերը երբ պիտի տեսնամ.
Իմ տխուր մահուանը լրատար է նա։

Տեսայ ու սիրեցի էլ չեմ ուրանայ
Ո՛վ ուրանայ իւր լուսովը կուրանայ,
Այնպէս մի՞ հատնտիր ով որ ունենայ
Գուցէ հողագնդին բարերար է նա։

16

ՂՈՇՄԱՅ

Վա՛յ անբաղդ մայր, որ յղացար ինձի,
Արգանդիդ մէջ արդեօք ինչպէս պահեցիր,
Եւ երբ աշխարհի մէջ ծնեցար ինձի.
Պարգևեցիր ինձ կեանք նա էլ մաշեցիր։

Մինչև հիմայ մէկ համ չառայ աշխարհից
Միամիտ եմ անասունից ոչխարից,
Տարաբաղդ եմ ապառաժի քարերից.
Միշտ մոլորած օտար աշխարհ քաշեցիր։

Բա՛ց տապանդ մայրիկ, գոգդ բա՛ց արձակ
Գոնէ ոսկորներդ տեսնեմ համարձակ
Ինաի զաւակդ, իմ արած աղաղակ,
Խարտոցի պէս դու իմ կեանքս տաշեցիր։

17

ՂՈՇՄԱՅ

Ո՞Ր մնացիր որդիս, յիշէ, մի մոռնար.
Հացի կարօտ, ջրի կարօտ մայրիկդ,
Յիշէ գուրթս, յիշէ կաթս զովարար
Հիմայ թողի՞ր գրի կարօտ մայրիկդ։

Քո վերայ յոյս դրի, քեզի պահեցի,
Արեան ծովից ու կրակից հանեցի.
Գուրթ ու խնամք սրտիդ խորը ցանեցի
Դու մօռացար սէրի կարօտ մայրիկդ։

Քո ճամբան նայելով աչքս կուրացաւ,
Քոյրդ ամուսնացաւ, մայրը ուրացաւ,
Իմ Ինաի որդիս թողեց հեռացաւ
Եւ չեն յիշում մրի կարօտ մայրիկդ։

18

ՎԱՐԴԻ ԾԱՌ.

(Թոխլանայ գիւանի)

Գոյնդ կանանչ ու փշալի տերևդ շատ վարդի ծառ
Ունիս քեզ համար սիրահար երգող սոխակ, վարդի ծառ
Արմատդ խոր հաստատելով ջրուել ես ամէն տարի,
Անթիւ են կարմիր թուփերդ, հոտդ առատ վարդի ծառ։

Տարածել ես քո ճիւղերը այգիին ամէն կողմը
Կարծես դու ես պարտէզի մէջ ապրող աղատ, վարդի ծառ.
Բացմանդ համար երգում է սիրահարդ զոր գիշեր.
Պահպանում ես քեզի մաքուր ու անարատ, վարդի ծառ։

Վարդդ տուր Ինաիին, որ պահեմ սրտիս խորը.
Որ դու լինիս մխիթարիչ, իմ հաստարմատ վարդի ծառ։

19

ԳԱՋԱՆ.

(Ղոշմայ)

Արտաւազդի շղթան կրծող գազաններ
Ամուր ատամներդ ո՞ր տեղ էք դներ,
Օղակների հետը մրցող գազաններ,
Ձեր մայրերը ձեզի ե՞րբ էին ծներ։

Անցել են շատ դարեր, բայց ձեր փորձերը,
Առասպել է դառել և ձեր գործերը.
Անյայտ է ձեր կեցած խորունկ որջերը,
Թէև պատմում են միշտ բայց ո՞վ է քններ։

Կուզէ ուղիղ լինի, ես չեմ հաւատայ,
Ոսկորն երկաթի դէմ ե՞րբ կ'դիմանայ.
Ձեր կեանքի շրջանը ո՞վ ճիշդ իմանայ,
Կարելի է Ադամին եղել է ընկեր։

20

(Ղոշմայ)

Սիրահարը թէ այցելէ սիրուհուն,
Արտաքսելը անգթութիւն է հոգիս,

Թէ համբոյր տայ մաքուր փափուկ ձեռքերուն
Ձ'նդունելը անհմտութիւն է, հոգիս։

Խոստացար ինձ սիրել և ոչ թէ ատել
Մեռնելը կարող էր մեզի բաժանել,
Միայն պարապ խօսքը որ կրցաւ զատել,
Հաւատալը անմտութիւն է, հոգիս։

Արի, սիրտս դու մի թողներ աւերակ.
Որ չ'լինիմ սիրոյ աշխարհում ծանակ.
Բուն չունի շէն տեղում ապրելու փափագ.
Ես եմ այն Բուն անստութիւն է, հոգիս

21

ՏՈՒՊԷՅԻՏ

Յաջողակ բաղդ ուր մնացիր,
Սրտիս վերայ հուր մնացիր,
Դու թողիր ինձի գնացիր,
Ճանապարհիդ կոյր մնացիր։

Տաք արիւն երակներիս մէջ,
Բորբոքուած ճրագներիս մէջ,
Ունեցած կրակներիս մէջ,
Ա՜խ, դու միայն ջուր մնացիր։

Կոկոններս թողիր խամրած
Իմ սիրտս թողիր աւերած
Գրպանս թողիր դատարկած
Ինձի պէս տխուր մնացիր։

Գոնէ ինձ հետ հաշտ մնայիր,
Սրտիս համաձայն գնայիր,
Հիմայ որչափ որ ջանացիր
Դու միայն լոկ լուր մնացիր,

Երբ տեսար որ քեզ չեմ սիրել
Ասացիր չեմ կարող տիրել,
Ինաին չես կրնայ գերել
Նրա համար լուռ մնացիր։

22

ՏՈՒՊԷՅԻՏ

Բարով եկաք, հազար բարով
Վայ իմ սիրած քաղցր օրեր,
Մինչև հիմայ ուր գնացիք
Ո՞ւր էք փախէր, ուր էք կորեր։

Ձեզի փնտռեցի շատ տեղեր,
Թէ քաղաքներ և թէ գեղեր.
Դուք էիք իմ սրտիս դեղեր
Բայց դուք ման կ'գայիք ձորեր.

Դուք ինձ համար հիմայ լաւ էք
Իմ պէտքերիս գուցէ բաւ էք
Միայն տրտում սրտիս խաւ էք
Ձ'լինիք թէ ընկնիք հորեր։

Դուք ինձի պահպանէք ես ձեզ
Յայտնեցէք ինձ կ'սիրենք քեզ.
Մի թողնէք ինձի աղէկեզ.
Ինչու էք ինձանից ջորեր (խռովել)

ԱԳՈՒ 36250

23

ՆՈՒԷՐ ՔՐՕՋ

(Տաճկաց „ա՜յ էֆենամ՝ այ սուլթանամ“ խաղի եղանակով)

Ա՜խ ցանկալի անուշիկ քոյը արի գտիր ինձի ճար,
Սիրում էիր քո եղբօրդ, բայց ինչո՞ւ շուտ մոռացար
Յաջողութիւնս մոռնալով յիշում եմ քեզ չարաչար
Միթէ դու այդչափ քարացա՞ր, որ չես յիշել քո եղբայր,
Դու գետես որ մոռացել եմ թէ ազգական և թէ մայր։ 1)

Դու չես գիտեր եղբօր սիրտը· քոյը կանչում է գիշեր զօր,
Քո փափաքով տանջվում եմ, դու մոռացար հոգւոյդ հատոր,
Որչափ ապրիմ քո կարօտով, կրկին զուր կեանք է բոլոր,
Միթէ դու այդչափ քարացա՞ր և այլն.
Դու գիտես որ մոռացել եմ և այլն.

Միտդ բեր ախ վերջին անգամ մխիթարէ, Հոգի ջան,
Քրոջ կարօտը միշտ ինձի վերքեր տուեց զանազան.
Արի դէր քո ձեռդ սրտիս, տամ իմ հոգիս աննման։
Միթէ դու այդչափ քարացար և այլն.
Քանի որ ես մոռացել եմ և այլն.

24

(ՍՏԱՄՊՈԼՑԱՆ ՏԱՆԷ ՏԱՆԷ ՆԱՌ ԿԵԼՐ)

Խաղի եղանակով

Բարևեցէք աղնուական ցեղ կ՚գայ
Ոսկի կամար բարակ մէջքին նեղ կ՚գայ,
Արի նազելիս, արի սիրուհիս,

1) Ամեն տան վերջը հարկաւոր է ասել։

Թմրած հոգւոյս անմահական դեղ կ՚գայ,
Սիրուն, խօսիր, խօսիր, խօսիր,
Աղնիւ, աւա՛ղ, աւա՛ղ, ա՛հ աւաղ, աւաղ։

Թէ գայ մօտս կապրեմ նորա հետ հանգիստ
Ուրախ օրեր շատ կունենանք առանց վիշտ
Արի նազելիս, արի սիրուհիս,
Նա կարող է անմահական ջուր տալ միշտ
Սիրուն, խօսիր, խօսիր, խօսիր,
Աղնիւ, աւա՛ղ աւա՛ղ ո՛հ աւաղ աւաղ։

Ես սոխակ եմ, նա վարդ լինէր ինձ համար,
Ինձ պսակեմ փշերիցը անհամար
Արի նազելիս, արի սիրուհիս,
Հէրիք է որ ինձի պատժեց անդադար
Սիրո՛ւն, խօսիր, խօսիր, խօսիր,
Աղնիւ, աւա՛ղ, աւա՛ղ, ո՛հ աւա՛ղ, աւա՛ղ,

25

(ՏԱՃԿԱՑ ԱՐԱՋ ԱՐԱՋ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

Լալուզար *)

Ա՜խ լալուզար լալուզար,
Լճերդ անթիւ անհամար, (2)
Կրակի պէս եռալով
Վազում ես դու անդադար (2)

*) Վարդոյ և Պուլանխ գեղերի մէջ սուրբի կարապետի Ճանապարհի վերայ եղած տաք ջերմուկները կոչվում են Լալուզար, որ քրտերէն նշանակում «Նաղուլթ և ոսկի» կարելի է հանքային լեռների շատութեան պատճառաւ այդ անունը տրվել է այդ անթիւ ջերմուկներին։

Ինչքից է որ քո ջուրդ,
Տաք է, բայց ո՞ւր է հուրդ, (2)
Հազար եւ մէկ հանքերով,
Լիքն է քո ամէն կուռդ (2)

Ջուրդ է միշտ առողջարար
Պարզ գետդ սննդարար (2)
Շատ հիւանդներ լաւցուցին,
Ջրերդ անթիւ անհամար (2)

Գետեմ որ ես, գովական,
Չես դառել Ապաստուման, (2)
Կամ մնալով անմշակ.
Գուցէ լինիս անպիտան։ (2)

Ով որ լիճդ լողացաւ
Գետդ եօթն անգամ անցաւ, (2)
Թէ բորոտ էր մաքրուեց.
Թէ հիւանդ էր լաւացաւ (2)

Երանի՜ թէ քո փոսը
Կամ լեռներիդ գլուխը (2)
Արծուէ դրոշ ծածանի
Եւ խաչարձան դրոշը (2)

26

«ԵԷՄԵՆ» (Խաղի Եղանակով)

Վոսբորի ալիքը խորունկ ճեղքելով,
Անցնում են նաւերը սաստիկ շտապով,
Նաւարկողը միջից չորս կողմ դիտելով,

Գնում ու գնում էր դէպ ուղիղ Պոլիս
Ցիշելով սիրուհին քաղվում էր հոգին

Դիտում էր պալատները շքեղ ու պայծառ,
Հիսար, Պէյիւք տերէ, Պէյքոզ ու Պէկլար,
Ալիքների նման մտքերով հազար,
Գնում ու գնում էր դէպ ուղիղ Պոլիս,
Ցիշելով սիրուհին քաղվում է հոգին։

Ձախ կողմը մնում էր այն հին Իւսկիւտար,
Սէլամսըզը չառաւ բարևն անհամար,
Նուահանգիստն ելաւ, ու մնաց անճար
Գնում ու գնում էր դէպ ուղիղ Պոլիս,
Ցիշելով սիրելին քաղվում է հոգին։

27

(ՍԵՒԱՍՏԱՊՕԼ, ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

Սիրոյդ դրան դէմը կանգնել կաղաչեմ
Ցոյց տուր սիրուն դէմքդ, գուցէ ճանաչեմ,
Արև ես լուսատու քեզնից կամաչեմ,
Անուշիկ սիրուհիս, գիտես, կանանչ եմ,
Հրաման տուր ապրեմ, որ չ՝մեղանչեմ,

Տարիքս պատանի՝ դարձուցիր պառաւ,
Սիրոյդ դէմ արիւնս սառած ջուր դառաւ,
Սիրտս կտրտուեցաւ, ու լոյսս մարաւ,
Անուշիկ սիրուհիս, գիտես կանանչ եմ
Հրաման տուր ապրեմ, որ չ՝մեղանչեմ։

Տեսնեմ կերպարանքդ ով իմ հրեշտակ,
Սէրդ է ինձ գաւազան, և լեզուդ պսակ,
Աչքիդ լոյսը ջահէ, ոնքերդ դանակ,
Անուշիկ սիրուհիս. գիտես կանանչ եմ.
Հրաման տուր ապրեմ, որ չ'մեղանչեմ։

28

«ՊԱՀԱՐ ՕՂՏԻ» (ԹԱՂԻ ԵՂԱՆԱԿ)

Գարունն եկաւ, սէրս վառ է,
Իմ նազելուս սիրտը քար է (2)
ՈՂ ասաց քեզ ուրիշ ճարէ,
Ես որ կ'լամ, դու ծիծաղէ (2)

Ձգեցիր կրակ իմ սիրտս,
'Իզուր թափեցի քրտինքս, (2)
Շատացուցի ցաւս վիշտս,
Ես որ կ'լամ, դու ծիծաղէ (2)

Քանի ողջ եմ պիտի յիշեմ,
Քեզ, նազելիդ գեղեցկադէմ, (2)
Հրամայես կ'ծիծաղեմ,
Բայց ես կ'լամ, դու ծիծաղէ (2)

29

(ԵԷՄԷՆՄ ԹՈՒՐԱԼԻ ՏՐ (Եղանակին)

Իմ սէրը չէր զօրաւոր,
Սիրտս թողել ես վիրաւոր,
Մի անցնիր մեր դռնիցը
Իմ ցաւերս են բիւրաւոր

Եթէ կ'գաս սիրելիս,
Մատանիս տամ քեզ, հոգիս,
Նրանով չես գոհանալ
Հանգստացիր իմ կրծքիս-

Սիրելիս սրտով սիրէ,
Արի սիրուհուդ տիրէ.
Քեզի տուած գրաւս,
Հասկացել ես, լոկ գիր է։

Չեմ մոռանալ ես քեզի
Խօստացել ենք մէկ մէկի,
Կսպասեմ որ քահանան,
Պսակով կտպէ մեզի։

Ցաւերս այն ժամանակ
Կ'լաւանան, իմ հոգեակ
Խոհեմաբար ապրելով
Կունենանք համեստ զաւակ։

Ապրենք պարկեշտ ու խոհեմ
Պատիւ վաստկենք վսեմ,
Երբ սրտով ինձ կ'սիրես,
Քեզի համար կ' մեռնեմ։

30

ՊԱՌԱՅԻ ԿԻՆ.

Ողորմեցէք խեղճ աղքատին,
Սև փողեր տուէք հացագին,
Մատաղ լինեմ ձեր ոտերին
Աւաղ, աւաղ ծերունի եմ (2)

Ահա ձեռներս դողդողալով
Երկարացնում եմ ձեզ, լալով,
Ընկայ ուժից զուր ման գալով,
Աւաղ, աւաղ ծերունի եմ, (2)

Մեռաւ իմ հոգւոյ հատիկս.
Որը մնացել են որդիքս,
Լալով կանչում են Մայրիկս,
Աւաղ, աւաղ, ծերունի եմ։ (2)

Զաւակներս մերկ ու բոբիկ,
Զուներն պարզ հագնելու շապիկ
Խնդրում են միշտ հացի հատիկ
Աւաղ, աւաղ. ծերունի եմ։ (2)

Աստուած, դու ա՛ռ, տուածդ հոգին
Ոտքս փողոցից կտրուին
Ինչպէս կուզեն գնան ապրին։
Աւաղ, աւաղ, ծերունի եմ։ (2)

31

(ԷՅ ԴԱՇԻ ՔԷԱՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ)

Ո՛վ ուրախ կռունկ, քո երգերով ուրախ լուր բե՛ր ինձ,
Սիրուն երամով բարձր թռիր, անուշ ջուր բե՛ր ինձ
Դու հաւատարիմ ես ընկերից, միշտ մխիթարող
Քնարի նման քո երգերի ձայնը դուր բե՛ր ինձ։

Ես քո երամիդ սպասում եմ, գարուն է քանի,
Միշտ՝ զոր ու գիշեր մտածմունքը խելքս կ'տանի,
Մեռնեմ թևերիդ, դարձիր փնտռէ անբաղդ Ինաի,
Կամ կեանքիս վախճան կամ մի ընտիր առուտուր բե՛ր ինձ։

32

ՍԻՐՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Տեսթան)

Տգեղը շորերով սիրուն չի լինիր,
Սև փայտը շփելով փայլուն չի լինիր,
Պառաւ ծերունիին գարուն չի լինիր
Գեղեցիկ պատկերը գովել է արժան,

Գովելու արժան է այն սիրունը միշտ,
Որ ունի լայն ճակատ, մաքուր, պարկեշտ ձիրք,
Սև աչքեր ու օնքեր կամ սպիտակ սիրտ,
Կամ չի ճարվում բնաւ մի անպէտ նշան։

Անպէտ նշան տեսար հեռացիր, գնա՛,
Նրա մօտը մի օր ըսպէ մ մի՛ մնա՛,
Երբ իմ խօսքերս են սիրունի վերայ,
Քեզ եմ գովում ազնիւ սիրուն գովական,

Գովական է սիրուններին երամը,
Արժէ հազար տարի նորանց մէկ ժամը.
Թէ հանդիպիս նորանց և մի անգամը,
Արքայութեան դռնից չես մնար բաժան։

Չեն բաժանուել սիրունից ո՛չ տէր՝ ո՛չ իշխան,
Ո՛չ էլ մի երեխայ և ո՛չ էլ տղան։
Սիրունները ունին ցեղեր զանազան,
Բնաւ չեն ունենար օրինակ դաժան։

Դաժանէ այն սիրտը որ սիրունն ատեց,
Անուշ ջրերիցը բաժին չ՚հանեց,
Էլ թող չ՚գանգատի որ իրեն զատեց.
Կ՚մնայ կարօտով սիրահար տղան։

Սիրոյ տղան, ձեզի կարող է գովել,
Դուք եղել էք կրակ, նորան էք բովել.
Եւ այնչափ անգութ էք կրնաք խորովել.
Մինչև որ դուք կապէք սիրելու պայման։

Սիրոյ պայմանները դուրական լինին,
Չ՚լինի թէ վերջը զուր ու ջան լինին,
Մարդու կեանքը մաշող հուր ու գան լինին,
Կարելի է սէրը դառնայ վատ դարան։

Վատ դարան չունենար սիրունը բնաւ.
Սիրունի հետ խօսողն չունի ո՛չ մի ցաւ.
Սիրունի գութն առատ և սիրտն է անբաւ,
Սիրոյ համար շատը եղան գիտնական։

Գիտնական որ եղան սիրեցին ուսում,
Գիտունը կռունկի նման է խօսում.
Բերանիցը միշտ աղբիւր է հոսում,
Սիրելիները կապեցին սիրելու պայման։

Սիրում են շատերը ունքերի համար,
Լուսաշող աչերը կարծես են տաճար,
Միշտ արիւն թափուել են սիրունի համար.
Միայն զեփիւռ մնաց մազերի վերան։

Մազերի վերայից կախուած ժապաւեն։
Զինարի հասակներ մեզի ապաւեն.
Երգում են շատ սիրուն սոխակ, կաքաւէն,
Խուլ է նորանց համար քնար ու լարան։

Քնարի լարերը մի քիչ թող լռեն,
Սիրունի պատկերը երգեն ու գրեն,
Կարելի է վառուած սրտերը ջրեն,
Որպէս զի չ՚մնան, անմշակ խոպան։

Խոպան մնաց սիրտս, երբ ինձի ատեց,
Իմ ընտրած սիրունը ուրիշը ճարեց,
Մոռնալով իմ սէրս սիրտս կրակեց.
Կրկին աշխատում են գտնել մի պարան։

Սիրոյ պարան շինեմ ոսկի թելերով,
Կապեմ բարակ մէջքին անգին ծոպերով,
Երգէ տատրակի պէս անուշ երգերով.
Կարելի է լինի ինձի պահապան։

Պահապան ես ինձի կապէ քո գերիդ,
Հոգիս քեզ յանձնում եմ ահա քո ձեռիդ
Միտքդ բեր արարչիդ՝ ստեղծող տէրիդ
Եթէ հրեշտակ ես, եղիր օգնական։

Օգնական ես արի, մէկ անգամ օգնէ,
Եթէ դու չես օգնում, ապա ո՞ւմ հոգնէ,
Տեսնում ես տգեղիս, որ մահուան տօթնէ,
Մնացել եմ միայն սիրոյդ գթութեան։

Գթութեան կարօտ եմ եմ ծիծաղ ժպիտիդ
Քո քնքուշ ձեռներիդ, եղէգ մատներիդ,
Սոսատիպ հասակիդ կոկ բազուկներիդ,
Արժանացուր տեսնեմ ո՛վ դու ծիածան։

Ծիածան ես մաքուր, ո՛վ սիրուն համեստ
Հագուել ես պարզ ընտիր ու մաքուր զգեստ,
Արի՛ ուրախացուր, Աստուած կ՚սիրես,
Քո սիրոյ համբուրիդ, արա ինձ արժան։

33

ՏԻՎԱՆԻ.

Բարի իշխան. անձիդ փորձանք, կրպակիդ հուր չ՚տեսնես,
Դու գթացող ողորմած ես, օրերդ զուր չ՚տեսնես.
Ով որ դիմեց քո գթութեան, եղար սրտով ցաւակից
Ինձանից զատ մի աղքատից էլ դէպք տխուր չ՚տեսնես։

Տէր իմ, ես չեմ մեղաւորը. մայրս ծնաւ ցաւերով,
Խանձարուրս կաթս արիւն. կեանքս սնաւ ցաւերով,
Սփոփեցիր տարաբաղդիս, որ եմ գրաւ ցաւերով.
Փոխարէնը չունիմ տալու, համբաւ անդուր չ՚տեսնես,

Երբ Քո սրտի գանձարանից նուիրեցիր ինձ բաժին.
Սիրելիից բարեկամից աղէտ կամ լուր չ՚տեսնես,
Իսկ քո համեստ գերդաստանը նման ուրախ թռչնակին
Խնդացնեն քեզ միշտ երգելով ձայները լուռ չ՚տեսնես։

———

34

ԴԻՎԱՆԻ

Համահաւասար ընկեր էք, միասին թէ մարդ թէ կին,
Միասին տանելու համար լուծ դրել էք ձեր վզին,
Մէկդ միւսի թերութեանը նայեցէք ներող աչքով,
Կեանք ճարեցէք ձեզի համար փառք տուէք ձեր պարզ ջրին.

Մի՛ անարգէք դրախտական ձեր մաքուր պարկեշտ կեանքը.
Հետևելով նոր մօտային փող կ՚տաք ներկին կիրին,
Սիրեցէք երջանիկ ապրել զուրը չ՚երթայ ձեր ջանքը,
Հետևո՞ւմ էք բօմանների գրուած սև սև տողերին։

Գուցէ ասես Ինաիին ուզո՞ւմ ես գիրքդ կարդալ
Ամօթէ մեզ որ ձեռք առնենք, հակառակ է մօտային։

35

ԴԻՎԱՆԻ

Ջրի նման սպիտակ ես ինձի անուշ արաղս,
Քեզ խմելով պարապեցայ եղայ անոյժ արաղս,
Ինչ ասեմ քեզի մզողին, որ երբ քեզի ստեղծեց
Ինքը խմեց ու հարբեցաւ, ընկաւ անուշ արաղս։

Հարուստը քեզի սիրելով փճացաւ քեզի նման.
Դու երբ մտար նորա փորը, նա եղաւ եզի նման.
Բայց միւսը առիւծ դարձաւ, փճացաւ մեզի նման.
Շատ սիրում եմ քեզի գովել, քեզ իմ քնքուշ արաղս։

Քեզի համար օգուտիցս զրկուել եմ մինչ հիմայ,
Գանգատներս ինձանից է, ով որ կուզէ իմանայ,
Թէ բաժանուիմ ես քեզանից թէև օգուտներ շատ կայ.
Դու չես թողել Ինաիին մի օր անփուշ արաղս։

36

ԴԻՎԱՆԻ

Վառեցաւ կեանքս սիրական, քո պատկերդ տեսնելով,
Թագուհւոյ նման ման գալդ ու հարճերդ տեսնելով
Դէմդ կանգնած աղաչում եմ, գուրթ ունեցիր, հոգի ջան.
Արտասունքս չեն չորանում այդ պարզ սէրդ տեսնելով,

Մի վէմ դրի որպէս նշան, ման եկած հողիդ վերան,
Ցիշելու եմ քեզ կեանքիս մէջ, քեզ այդ տէրդ տեսնելով
Քո անունդ ոսկի տառով գրեմ սենեակիս դրան,
Դու ճշմարիտ թագուհի ես ծառաներդ տեսնելով,

Այն ժամանակ գոհացող է քո Ինաին սիրելիս,
Երբ այցելէս և նա խնդալ, վառ ջանքերդ տեսնելով

37

ՂԱԶԱԼ

Գեթսեմանի ձորի մէջ Ցիսուս աղօթել սկսեց,
Մատնուել չէր աշակերտից, բայց ծնկաչոք այս ասեց,
Հայր, որդիդ եմ, խնդրեմ ահա, անցուր գաւաթն ինձանից,
Հոգիս յօժար է տանելու, մարմինն տկար անուանեց։

Բայց ոչ թէ իմ կամքիս յարմար թող լինի Հայր բարերար.
Քանի որ քո պատուերներդ որդիդ սրտով կատարեց,
Երկնքիցը հրեշտակը մօտեցաւ խոհեմաբար.
Ձեռք երկարցուց և զօրացուց. առած պատուէրը պատմեց։

Հայրդ ղրկեց քեզ իւր ծոցից, որ կռապաշտ աշխարհը.
Զոհուիս, փրկես, լուսաւորես, Հայրդ խօստումն աւարտեց.
Ստեղծող Հօր խօստման յարմար գտիր բնութեան ճարը
Հանէ կեանքդ խաչի վերայ, ասա՛ց ու վերև քաշուեց։

38

ՏՈՒՊԷՅԻՏ

Շաւարշանի հողի վրան,
Քեզի ընտրեցիր գերեզման.
Թադէոս սուրբ առաքեալ,
Որ թաղուել ես դու Պարսկաստան։

Քրիստաօնեայք քեզի սրտով
Յարգում են քեզի յիշելով
Դու վարդ էիր անուշ հոտով
Տերևալից ու աննման։

Քրիստոսից առար պատուէր,
Աբգարը քեզի կսպասէր,
Երբ տէրը Յարութիւն առնէր
Դու գայիր դէպի Հայաստան։

Կուռք չարդեցիր շատ անհամար
Տեղերը կանգնեցիր տաճար

Աշակերտներ գտար հազար
Քարոզեցիր Աւետարան։

Զորս հարիւր տարի որ անցաւ,
Գերեզմանիդ ընկերացաւ,
Փափագը առաւ, կշտացաւ
Նահատակը Մամիկոնեան։

Շաւարշանի դաշտն ընդարձակ
Ներկեցիք սրտով, համարձակ
Գրկախառն հանդստացաք,
Զոյգ ամոլներդ ժրաջան։

39

ՏՈՒՊԷԻԹ.

Ո՛վ կանուխ ելաւ առաւօտ
Եղաւ ինձի պէս Հոմերոս,
Կարծելով ճրագ անաղօտ
Կոչվում է լուսով Փարոս

Չի ուզել բանի հաւանել,
Զարմայր, Արամ ինքն է դառել,
Գիտէ օրը մէկը ճարել,
Դարձել է նոր Պոմբիւլիոս

Անհաշիւ սիրոյ գրեր
Միշտ ղրկում է ամէն տեղեր,
Թէ քաղաքներ՝ և թէ գեղեր.
Կանչում են Առաքեալ Պօղոս։

Ո՞վ է տեսել այսպէս վհուկ,
Ինքն է արիւն ծծող տզրուկ,
Ահա տեսէք նոր ել թզուկ,
Կիւլվէրին ձգեց փոսէփոս։

Այդպէս մէկը ամէն տարի
Մոտս ունիմ նման չարի
Կարէնը դարձուց Ինաի
Ահա իմ սրինգս անխօս,

40

ՂՈՇՄԱՅ.

Մի՛ վստահիր տեսքիդ անգութ սիրեկան,
Մինչ հիմայ քեզ նման շատն եկաւ անցաւ,
Քո դէմդ անօգուտ է իմ աղաչանքս.
Արտասունքս լեռներն ելաւ ու անցաւ.

Գնա՛ անխղճմտանք, անգութ վայ՜ քեզի,
Ո՛չ ոք չէին լսել ինչ ըրիր ինձի,
Թէեւ դու յայտնեցիր թէ «քեզ սիրեցի»,
Ի՞նչ անեմ, իմ սէրը թռաւ ու անցաւ։

Ահա քեզ հրաման ով գեղեցկուհի,
Որին որ սիրում ես եղիր սիրուհի
Այս օրից ետ՝ ես զատ՝ դու էլ զատ ապրի,
Իմ սրտի ջրհեղեղ սելաքը անցաւ։

41

ՂՈՇՄԱՅ

Ինձի բաւական է տրտմութիւններս,
Զով օդ դու էլ հիմայ ամպել ես այդպէս.
Պաղել չէ վառ սէրս գթութիւններս
Առատ աղբիւրներս ցամքել է այդպէս։

Դու տրտում, ես տրտում, աշխարհ չէ տրտում,
Սիրուն քո ձեռիցը գանգատ տամ. բայց ո՞ւմ,
Քեզ պէս գեղեցիկից ինչ եմ գանգատում.
Քանի որ իմ վարդը խամրել է այդպէս։

Սիրոյ ակոսի մէջ փթեցաւ հասկս,
Շատացաւ սրտիս մէջ փուշ ու տատասկս,
Նոր պարպեցաւ իմ կիսատ պայուսակս,
Ցորենս կարկուտը զարկել է այդպէս։

42

ՂՈՇՄԱՅ

Սիրելիներ, ելէք, դիմաւորեցէք,
Լոյս ու արևի ընկերնէ եկողը,
Յօժարութեամբ սիրոյ բարևը առէք,
Պարկեշտութեան սիրող տէրնէ եկողը։

Ինչ կամենաք ունի սա իրայ մօտը,
Վարդից ու մեխակից անուշ է հօտը

Ճրագների պայծառ ու անաղօտը
Ամբողջ ընտանիքի սէրնէ եկողը

Ընդունեցէք։ բերէք, ձեր սրտի խորը,
Հազար բիւր երանի հօրը ու մօրը,
Հարկ չէ հիմայ փորել տապանիս հորը,
Երբ որ իմ լուսաբերնէ եկողը։

43

ՂՈՇՄԱՅ

Ծոյլին դու դուր չես գալ, ինչ կուզես գրէ,
Չի կրնայ քեզի հետ հաշտ ապրել, գրիչ.
Սիպտակ թուղթը որչափ կուզես մրօտէ,
Ծոյլը դեռ չէ գտել փաստ. ապրիլ, գրիչ։

Երբ փետուրով գրում էին հին գրեր,
Կակղանում էր, կարծես ընկել էր ջրեր,
Ուսումը հնարեց երկաթէ ծայրեր
Չեն սիրում սովորել. հաստ ապրել հրիչ։

Ինային եմ գրել գիտեմ բայց շատ քիչ,
Սովորում եմ, չունիմ երբէք գանգատ ինչ.
Երբ ես եղայ վէպի, երգի ստեղծիչ,
Էօժէն-սիւն սկսեց դաղտ ապրել գրիչ։

44

ՏՈՒՊԷՅԻՏ

Անիւները ժամացոյցիս
Կ'դառնան կեանքիս հակառակ.

Սուր սլաքը կողմնացոյցիս,
Կ'թափէ գլխիս աղաղակ։

Ունիմ հազար ու մէկ դանդատ,
Չեմ եղել քեզանից ազատ,
Ինձի թողել ես աննկատ
Ո՛վ իմ շատ սիրած ժամանակ

Դու թողիր ինձի անյօժար,
Մնացել եմ հիւանդ տկար,
Ինչ որ ունէի գողացար.
Բաղդս շինեցիր աւազակ։

Թէ տուիր ինձ ապրելու կեանք,
Աշխատանքս եղաւ զուր ջանք։
Անօգուտ վաստակ կամ զրկանք,
Բաժինս տուիր հառաչանք։

45

Մ Ե Խ Ա Կ

Տ Ո Ի Պ Է Ի Թ.

Ո՛վ իմ սիրած հոտով Մեխակ
Քեզ սիրում եմ գրքիս նման,
Դու ես կեանքիս հաստատ տեղեակ
Քեզ սիրում եմ գլխիս նման,

Ով քեզ քաղեց ու հոտոտեց
Ոտքերի տակը կոխկռտեց,

Ամէն կոկոններդ պոկեց,
Արմատդ դիր սրտիս վրան։

Զօրանայ հոտով արմատդ,
Չի գտնուի ընկեր հատդ,
Հեռանայ չարդ վատդ,
Որ չ'լինիս խեղճ ձիրքիս նման։

46

«ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ» (ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

Անբաղդ օրիորդ՝ տգեղացել ես,
Որ դէմքիդ վրան կիր, ներկ քսել ես,
Ուղիղ պատկերիդ՝ և կերպարանքիդ
Կային սիրահար, որ նկատել ես։

Երեսդ ներկել դու ճրը սորվեցար,
Դուրական լինելու աշխատեցար,
Բայց այդ ներկերով շուտ թոռմեցուցիր՝
Երեսիդ տեսքը, ու տգեղացար։

Եթէ չէ ազդել քեզի նոր Մօտան,
Ու չես սովորել կարդալու Ռոման.
Ճարէ քեզ համար մի համեստ զաւակ,
Գուցէ ունենաս քեզի մի ժառանգ։

Հագած հին շորիդ նոր նոր կարկտան
Զարնելու ջանաս, զուր է սիրական,
Ցեղը սուրբ պահել փափագողները,
Չեն սիրել բնաւ սիրոյ գողերը։

Իսկ երբոր գտնես քո ընտրած փեսան,
Շուտ փճանում է քո ներկի նման,
Սրի մոռացիր դէմքդ ներկելը.
Եւ քո բաղդովը փառք տուր գոհացիր։

47

ՂՈՇՄԱՑ

Երդում կանեմ որ գեղեցիկ չ՝սիրեմ,
Կուզէ գեղեցկութեան թագուհին թէ գայ,
Հիւանդանամ ընկերիս քովը ննջեմ,
Զեմ կանչեր բժշկին տիրուհին թէ գայ։

Դու անուշիկդ և դու սիրունդ,
Հոգիս ուրտեղ մնաց, ըրած երդումդ,
Անուանդ ամօթէ մերժես երդումդ,
Եւ ես էլ սպասեմ, սիրուհիս թէ գայ։

Երբ ինձի զատեցիր քո սիրոյ գրկէն,
Տիգրիսն աչքէս եկաւ, Եփրատն իմ սրտէն
Ով ուզէ անարգուիլ քեզ պէս սիրունէն,
Սևը թափի ուրախ օրերուն, թէ կայ,

48

ՕՐԻՈՐԴԻ ՀԱՐՍ ԳՆԱԼԸ.

«Զէքմիշ զաթարընի» խաղի եղանակով.

Կարաւանի նման հրաւիրակներ,
Ամէնը ուրախ սիրտ՝ փայլուն ճակատներ,

Զարնվում են քնար, ջութակ, դաշնակներ,
Ղրկում էք ծնողներ ահա գնում եմ,
Ձեր աղօթելը միշտ ես խնդրում եմ։

Հաստատ մնայ տունդ Հայր իմ ցանկալի
Ունենաս անցաւ կեանք հարուստ սեղան լի,
Կարօտ է դստրիկդ օրհնող բերանի,
Ղրկում էք ծնողներ, Հայլն։

Բեր համբուրեմ սրտով ձեռքերդ մայրիկ
Որ պահեցիր ինձի ինչպէս մի ծաղիկ,
Հիմայ նոր կեանք տալով դուք ինձի քաղցրիկ
Ղրկում էք ծնողներ ահա գնում եմ
Ձեր աղօթելը ես միշտ խնդրում եմ։

Օրհնեցէք զաւակիդ դուք ամէն անգամ
Որ լինիմ պիտանի ու խոհեմ անդամ,
Պահեմ ձեր անունը պատիւն ամէն ժամ,
Ղրկում էք ծնողներ ահա գնում եմ,
Ձեր աղօթելը ես միշտ խնդրում եմ

Երկնքից թող ծագի ձեր կենաց արև
Հովանիի նման մնա՛ք իմ վերև,
Ահա վերջին անգամ ստացէք բարև։
Ղրկում էք ծնողներ ահա գնում եմ,
Ձեր աղօթելը սրտով խնդրում եմ։

49

Երկայն ձիգ ծառի տակ նստել եմ տրտում,
Յիշում եմ իմ կեանքս ցաւոտ ու ցաւոտ,
Սիրտս ծառի նման միշտ է օրօրվում,
Տեսնում եմ աչքերս լալոտ ու լալոտ։

Տերևները արձակ և խիստ համարձակ,
Ունի ոտոյգ անուն Այգի անկատակ.
Մանկութեանս ման եկած թէ գիւղ թէ քաղաք,
Տեսնում եմ նոքա էլ քարոտ ու քարոտ։

Միայն իմ ընկերս դուք էք, գրի՛չ, թուղթ,
Մինչ հիմայ ապրում եմ, տրտում ու անուխտ,
Թէ ունի Ինային իրեն համար դուրթ,
Փառք կ'տայ արարչին կարօտ ու կարօտ։

50

Ահա բարեկենդան՝ ահա ուրախ օր,
Որ ինձ համար ոչինչ բան է հոգի՛ ջան,
Երբոր ես տրտում եմ թէ գիշեր թէ զօր,
Տխուր ճամբան ինձի լան է հոգի ջան։

Բարեկենդանն ի՞նչ է քանի որ չունիմ,
Մէկ հաց ինձի համար, ուտեմ ու քնիմ,
Թէև հօրս տունը խորվածներ ունիմ,
Այսօր իմ բաժինը թան է հոգի ջան։

Մեծ մեծ երազներով խաբում եմ ինձի,
Աղքատութեան բովով տապում եմ ինձի,
Խաբող յոյսերով չարչարում եմ ինձի,
Ողջ կասէ բաժինքը ջան է, հոգի ջան։

51

(ԱՊԱՐԱՆԱՅ ԿԻՏԷՆ ՂԱՐՏԱՇ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

ՈՐԲ ՕՐԻՈՐԴ

Մեռաւ իմ հայրս տարաբաղդ,
Թողեց ինձի անտէր, անբաղդ, (2)
Ոչ ոք չունիմ ինձանից զատ,
Այդ պատճառաւ ես լալիս եմ։ (2)

Չունիմ, ինձ զոնէ խնամող,
Պահպանող, դաստիարակող. (2)
Իմ լաւութեանը մտածող,
Այդ պատճառաւ ես լալիս եմ։ (2)

Հօրէս ընկած իմ բաժիններ
Մնալ, մերկ ու թշուառ անտէր, (2)
Ինձի նման մին չէ եղեր,
Այդ պատճառաւ ես լալիս եմ։ (2)

Շատ է սովորելու ձիրքս
Թանաք չունիմ չ'կայ գիրքս, (2)
Տրորվում է միտքս, սիրտս
Այդ պատճառաւ ես լալիս եմ (2)

Տէր Աստուած իմ ինձի դուռ բաց
Օրիորդ եմ ես աչիքաց, (2)
Բայց ես անտէր եմ մնացած
Այդ պատճառաւ ես լալիս եմ։ (2)

52

Քնիր դուստր իմ Աղաւնեակ
Էգուց է մեզի կաղանդ,
Հին շորերդ կ'թափես.
Նորը կ'տամ քեզ ժառանգ։
Քեզ, քեզ իմ Աղաւնեակ քեզ քեզ,
Անմեղ տատրակ քեզ քեզ

Հին շորերուդ փոխարէն, Աղաւնեակ
Նոր հալաւներ կ'կարեն.
Դերձակը ծոլլ լինելով, Աղաւնեակ
Առաւօտը կսարտեն
Քեզ, քեզ իմ Աղաւնեակ քեզ, քեզ,
Անմեղ տատրակ քեզ քեզ,

Կանուխ որ հանգնես շորդ Աղաւնեակ
Տօնէ կաղանդի օրդ
Մոռնալով չարութիւնդ, Աղաւնեակ
Համբուրէն ինձ ու հօրդ։
Քեզ քեզ իմ Աղաւնեակ քեզ քեզ
Անմեղ տատրակ քեզ, քեզ,

Ուրախացիր այն ատեն Աղաւնեակ
Երբ քեզ միրգեր կ'բաշխեն

Գրպանդ ամուր պահէ
Որ քեզի չ'լացընեն։
Քեզ քեզ իմ Աղաւնեակ քեզ քեզ,
Անմեղ տատրակ քեզ քեզ։

53

Ե Ղ Ն Ի Կ

(Ամէն ավէն պէն օլայիմ վուբ պէնի եղանակով)

Անտառի մէջ ապրում էի ես անմեղ,
Ձագերիս հետ կարածէի ամէն տեղ
Չէի սիրում ես ոչ քաղաք և ոչ գեղ,
Որսորդ, որսդ ես կ'լինեմ զարկ ինձի ոհ,
Թող ձագերս ապրեն և օրհնեն քեզի։

Ծառերի մէջ տեսար խաղաղ ապրում եմ,
Իմ կաթս ձագերիս տալով պահում եմ
Տուած գնդակիցդ դուցէ մեռնում եմ
Որսորդ, որսդ ես կ'լինիմ զարկ ինձի ոհ,
Թող ձագերս ապրին ու օրհնեն քեզի։

Գթա իմ ձագերիս հեռացիր, գնա
Կուզես քո ձեռքերդ արիւնովս լուա,
Ծերացել եմ ահա, զարկ մի վախենայ,
Որսորդ, որսդ ես կ'լինեմ զարկ ինձի ոհ,
Թող ձագերս ապրեն և օրհնեն քեզի։

54

ԱԹԲԻՒ ՊԱՂԼԱՏՄ (ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

Ն՛ժոյգս կապեցի նռի ծառերին,
Մազերս փաթաթուեց. փշին, քարերին
Ինձնից բարև տարէք ջրոտ սարերին
Մի՛ զարներ ինձ ընկեր խորունկ է վերքս,
Չի լաւնայ քամակս, սիրտս ու ձեռքս։

Ն՛ժոյգս կապեցի նոր եղ կանանչին,
Քեզ տանեմ մեր Գանձակ այգիի միջին.
Ես մատաղ եղիր եմ ընկեր ճանանչին
Մի զարներ ինձ ընկեր խորունկ է վերքս,
Չի լաւնայ քամակս, սիրտս ու ձեռքս։

Ն՛ժոյգս կապեցի ցորենի արտը.
Ընկերս թոռմեցուց իմ սրտի վարդը
Իմ խորդախ ընկերս տուեց իմ ջարդը։
Մի զարներ ինձ ընկեր խորունկ է վերքս
Չի լաւնայ քամակս, սիրտս ու ձեռքս։

55

(ԿԷՆՃԼԻԿԻՄ ՎԱՐ ՍՐՄԱԼԻ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ)

Թէ ինձ յարմար ես մի ընկեր ճարէի, աւաղ աւաղ
Խոստանում եմ կերակրէի, պահէի, աւաղ աւաղ
Նորա համար սիրուն շորեր կարէի,
Եթէ սիրէր, ես էլ սրտով սիրէի,
Շապկիս գնով՝ մարգարիտներ գնէի։

Նա նորաբոյս լիներ վարդենու նման
Դէմքը սիրուն, լեզուն քաղցր դուրական.
Ինքը լինէր նոր տասնուհինգ տարեկան,
Եթէ սիրէր, ես էլ սրտով սիրէի,
Շապկիս գնով մարգարիտներ գնէի։

Ինձի նման չէր կարող ուրիշ ճարել.
Եթէ սիրէր, աչքի լոյսը չէր մարել,
Ահա սիրոյս թելը ես նոր եմ լարել,
Եթէ սիրէր ես էլ սրտով սիրէի,
Շապկիս գնով մարգարիտներ գնէի։

56

ՏՈՒՊԼԻՅԻՏ

Ծերացել ես՝ մայր իմ քաղցրիկ,
Մի՛ աշխատիր քեզ կը պահեմ
Տանս վէմն ես դու մէկ հատիկ
Աշխատանքիդ միակ շահ եմ։

Ինձ պահելով մեծացուցիր,
Մինչև այս տարիս հասուցիր,
Կրծքիս վերայ հանգստացիր
Քո աթոռը կամ քեզ գահ եմ։

Պահպանում եմ մայրիկ քեզի.
Որ ոչինչ պակասի մեզի
Հօրս, Պապիս, մայրս, ձեզի,
Ես լոյս տուող ղամբար ջահ եմ։

Զեմ մոռանայ քեզի մայրիկ,
Ո՛չ առատ կաթդ անուշիկ.
Թէ ուրանամ իմ սիրունիկ
Գերեզմանս ես կը բահեմ։

57

ՏՈԻՊԷՅԻՏ.

Փոքրահասակ քոյր իմ անտէր,
Մնացի ես որբ ու անմայր,
Զուրէ կեանքս, կանցնի անսէր,
Քանի որ չունիմ ինձի հայր։

Զունիմ ինձ համար մտածող
Ինձի հետ տրտմող, սգացող
Յաջողակ օրս խնդացող
Զունիմ հարազատ եղբայր։

Դու երկնքիցը տէր Աստուած,
Լոյս տուր ինձի, տէր ողորմած,
Մնացի պատի տակ ընկած
Ո՛չ ոք չ՛ասեր արի, մի՛ լար։

Երկի՛նք, դու ես մի միայն լոյս
Եւ դու ամէն ողորմած կոյս,
Շնորհեցէք ինձ շող կամ լոյս,
Որ չ՛մնամ տգէտ խաւար։

58

(ՀԻՆ ԶԷՀԷՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԱՇՂԻ ԱՑՐԻԱՆԱԼԸ)

Թարգմանութիւն

Ելելէ ոչխարը հօտից հեռացել,
Կաթի կարօտ են իւր մանր գառները։
Փարախը քանդուել, ու հօտնէ ցրուել,
Ոչխարները փախել են, լեռան ծայրերը։

Արդեօք ո՞ւր տեղ գտնեմ Եղնիկն աննման
Ո՞ր լեռը ես գտնեմ հոտով անթառամ.
Որսորդը կորուցած այծեամի նման
Ընտրել է իրեն բոյն այդ սև քարերը։

Կարմիր վարդիս շուրջը սուր փուշը պատեց
Սողոմոնի դահս էր, անարգեց, ատեց.
Լաւ կեանքէս զզուած էր, ինձի էլ զատեց,
Ընտրել էր ինձի տուն հեռու սարերը։

Զէհրին իւր կեանքիցը անուշ է տրտունջ,
Ահա այգեպանի այգիի մրմունջ,
Վարդի տերևների լացն էր լուռ ու մունջ,
Երբ սոխակը թողեց վարդի ծառերը։

59

ՎԱՇԽԱՌՈՒՆ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆ.

(ՏԷԱՍՏԱՆ)

Ձիով գնում էր գիւղ մի քաղաքացի,
Իւր հին առնելիքը առնելու համար,

Պատահեցաւ նորան խեղճուկ գիւղացին,
Տուին սիրոյ բարև կամքերով յօժար։

Գիւղացին երբ հարցուց, թէ ո՞ւր ես գնում,
Զըլլի՞, առնելիքդ նոր ես պահանջում,
Այսպէս տաք ժամանակ ի՞նչ ես տանջվում,
Աշխարհը սեփական չէ, մեզի չի մնար։

Քաղաքացին ասաց, տես բարեկամիս
Իմ մօտս չ՚գալը եղաւ մէկ ամիս,
Այսօր ստիպուեցայ՝ անէծք տալ շահիս,
Գնալ կռուել հետը սաստիկ չարաչար։—

Վնաս չունի ասաց. գիւղացին, Աղա,
Կարելի է գործերը ժամանակ չի տայ,
Գիւղացին չի կրնայ՝ քո փողն ուրանայ,
Քանի որ այդ գործի մէջ մենք շատ ենք տկար։

Քաղաքացին ասաց, խօսքդ չէ մաքուր,
Ինձի անփող կ՚գար պէտքս ընդհանուր,
Եղ, պանիր, ու կարագ. ձաւար ու պլղուր,
Շատը կ՚ծախէի կառնէի գումար։

Եղելէք դուք ընկեր. ասաց գիւղացին,
Քրտինքով վաստկած մեր ցորեն հացին.
Քաղցած թողիք մեզի տղայքս լացին,
Առաք, ու անում էք գանգատներ հազար։

Ինչպէս չ՚գանգատիմ, փողս առնում են,
Մնացած ապրանքս՝ անփող տանում են,
Տարին չորս հինգ մուրհակ թէ նորոգում են.
Բայց թէ ստանալու չունիմ բնաւ ճար։

Տարին չորս հինգ մուրհակ դո՞ւ որ առնում ես,
Մեզ նման խեղճերին՝ տունը քանդում ես,
Դրա համար ուսումը այնչափ ատում ես.
Որ քո դէմը լինենք մենք խեղճ ու անճար։

Ասաց քաղաքացին, դպրոց, վարժարան,
Եղել են մեզ պէսին թակարթ ու դարան.
Որոնք մտան այնտեղ Սոկրատէս դառան.
Մնաց մեր փողերը անգումար, անմար։

Այդ է լաւ պատճառը, որ դու ատել ես,
Արդեօք որչափ հին հին տներ աւրել ես,
Երբոր պարտքիդ տեղը մալը տարելես,
Շատերին արել ես լաւ մահուան պաշար։

Միթէ իմ փողերս գիւղացուն բաշխեմ,
Կամ մաս մաս ընելով աղքատին բաժնեմ.
Ես որ ձեր քիհային լաւ կնքահարնեմ,
Փողս ուրանալու ունի՞մ հնար։

Գիւղացին չի կրնայ ձեր փողը ուտեր
Ո՞վ էր լսել այդպէս պօչաւոր սուտեր,
Որչափ ուշացուցին այն քո օգուտնէր
Մի տարվայ մէջ գտար այդպէս մի տօմար։

Պէտք չէ նորանց փողը և ո՛չ էլ շահը,
Ասաց քաղաքացին, այս է իմ ահը.
Կարծես մենք ենք նորանց տապանի բահը,
Որ մեզնից փախչում են ինչպէս անմայր դառ։

Երբ մուրհակ առնում ես տարին հինգ անգամ,
Դու մահ ես բաժանում ամէն օր ու ժամ.
Չ'թողիր մեր գիւղը պիտանի անդամ,
Որ դրացու մօտը պատիւ ունենար։

Գեղի քեհին վա՛ռ էր, տղան պսակեց,
Փող տուի տիրացուն քահանայ օծուեց,
Իմ փողովս երկու սև աչառ գնեց,
Պարտքը չորս հարիւր է, և ո՛չ թէ հազար։

Աղա՛ քո տուածի գումարն ընդ ամէն,
Կարելի է հարիւր լիսունի հասնեն,
Քո այդ չորս հարիւրնոց եղած մուրհակէն
Մէկու կէսից աւելն զուր է, բարերար։

Վա՛յ քեզ ժլատ հարուստ՝ վա՛յ տոկոսասէր,
Չ'գիտեմ քո խիղճդ քեզի չի տանջեր,
Անարդար միջոցով փողէք հաւաքեր,
Բայց ձեր գերեզմանը կ'լնի լեռան ծայր։

Աշխատէ գիւղացի ապագայ ճարէ,
Տոկոսասէր սիրտը ապառաժ քար է,
Ինաիին խօսքը լաւ միտդ պահէ,
Քանի որ հարուստը քեզի հաց չի տար։

60

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՍԱՆՈՒՆ

Խարիսխն սրտիս գո՛ւ ամրացո՛ւր, Կարող կամովդ Արարիչ,
Արևն իմ 'իտես հանցես, Ահեղ վճռով քով Փրկիչ.

Չքնաղ լուսով լուսաւորեա՛, Քամ գթութեան իմ սրտի
Ահա խնդրեմ թեւատարած՝ Նշոյլ լուսոյդ Արևի։
Տո՛ւր ինձ շնորհ ուսանիլ միշտ՝ Երկնից շնորհ անսպառ։
Ուղղեա՛ սիրտս 'իսէր ուսման Ցնծալ առնել սուրբ հանճար։
Հիւսեմ աղերսս շղթայաշար, Ի դէմս քո անմահ բան,
Բէնիդ տամ փառք պաղատանօք՝ Սուրբ հոգւոյն միշտ յաւիտեան։

61

ԾՈՅԼ.

Ծուլութիւնը սիրող մարդու,
Ձանքը պարապ ու զուր կանցնի,
Նորա կեանքը վատ ու ազդու.
Շատ անախորժ տխուր կանցնի։

Չի ունենալ մի պատառ հաց,
Կամ սպասում է աչիքաց,
Մէկը նետէ իրեն առաջ,
Չրի տեղ ձեռը ժուռ կանցնի։

Ծոյլը չի ունենար շապիկ,
Իմաստուն է, կ'ըլլի կապիկ
Նա եղել է անպէտ ծաղիկ,
Նորա կեանքը անդուր կանցնի։

Չի ունենալ հացի սեղան,
Բայց կ'բանայ խոշոր բերան,
Չի տեսնել իւր աչքի գերան,
Եղբօր շիւղը մեծ լուր կանցնի։

Բամբասում է աշխատողին.
Չի հաւանել վաստկողին։
Հացի ցեց, պանրի կրողին,
Տեսէք, կամաց թէ ո՞ւր կանցնի։

Ծոյլը կ'մնայ չքաւոր,
Ուրախ օրերնէ սգաւոր,
Երեսն այնչափ թուք կերա՜ւ որ
Ինքը կարծեց թէ ջուր կանցնի։

Խոհեմութիւնը ատելով՝
Միշտ ինքը իրեն գովելով,
Ապագան չ'մտածելով.
Ապրած օրը մբրուր կանցնի։

Ծոյլը ընկել է փոսէփոս.
Դեռ կասէ, ես եմ Հոմերոս,
Կամ աշակերտ է Թէսաւրոս,
Ա.հա սուտ՝ որ հարիւր կանցնի։

Խօսելու հետ շատ դանդաղէ,
Կեանքին արտը ինք կ'քաղէ.
Անզգայ է, սիրտը պաղ է
Այնպէս թէ, ջրից հուր կանցնի։

Թէ արհեստ և թէ ուսում,
Իրեն մտքով է բամբասում,
Միշտ օգնութեան է սպասում,
Թէ նուիրեն կամ բուռ անցնի։

Ծոյլի ձեռը ընկած բաժին։
Երբ մոտեցնում է բերանին,
Մտածում է «թէ դժուարին»
Բան է ուտել, էհ ո՞ւր կանցնի։

Ծոյլի ճրագը միշտ մութ է,
Թէ խրատես անօգուտ է,
Ասում է «աշխարհը սուտ է»,
Երբոր ինձանից զուր կանցնի։

Չի գիտէ ինքն է պատճառը.
Կորուցել է հացն ու ճարը.
Ոտքի տակի խոշոր քարը,
Ձեռքով դրեր է, ու կանցնի։

Արի՛, ատէ այդ վատ կեանքը
Կամ սիրէ քու աշխատանքը.
Յաջողութեանդ բաղձանքը՝
Սրտիդ սենեակն անդուռ կանցնի

Ով որ ծուլութիւնն անարգէ.
Իրեն համար հաց կ'ճարէ
Ինային քեզ կ'խրատէ,
Թէ չես լսեր, նա լուռ կանցնի։

62

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՍԻՐԵԼԻԻՆ

(Պէն հավատան ուչաբեբէն խաղի եղանակով)

Ես վերևից թռած ատեն, ձեռքով կանչեցիր ինձի,
Լաւ գիտէի իմ արժէքս, աժան ծախեցիր ինձի,
Ո՛չ ուղիղ սրտով սիրեցիր, ո՛չ ազատեցիր ինձի,
Գնա՛ բարով ներկած աչեր, մի կողմը դու, մինը ես։

Երէկ գիշեր սիրուհուս մօտ, ներքևս էր սառն հող,
Բարձս քար էր, կ՚գար անձրև, և չէի տրտնջացող,
Ես մենակ չէի մնացած, սէրս էր ինձ ընկերացող
Գնա՛ բարով ներկած աչեր մի կողմը դու, մինը ես։

Ա՛յ, դու անսէր ինձի տեսար, ուրիշ մէկը չ՚գտար,
Ի՞նչ ժառանգութիւն ունէիր, ինձ հետ բաժնելու մտար,
Անմեղ սէրս գրաւեցիր, հիմայ մոռցար, ուրացար,
Գնա՛ բարով ներկած աչեր, մի կողմը դու, մինը ես։

63

ՆՈՒԷՐ ՓԱՌԱՆՁԵՄԻԴ։

(Դամիտամ խաղի եղանակով)

Փառանձեմը կ՚գիտէ պատուհանից,
Անուշ ձայնով կ՚երգէ Օմաններից։ վա՛յ վա՛յ
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դո՛ւ ինձի,
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ, վա՛յ վա՛յ։

Փառանձեմը կ՚սիրէ նոր եկ Մօտան,
Թուրթակի պէս ձայն կուտայ շատ աննշան, վա՛յ վա՛յ։
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դո՛ւ ինձի
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ. վա՛յ վա՛յ,

Փառանձեմս թէ լինի Ազնիւ. խոհեմ,
Հոգւոյ դէմը իմ հոգիս գրաւ դնեմ։ վա՛յ վա՛յ,
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դու ինձի
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ վա՛յ, վա՛յ.

Փառանձեմս սև աչեր կարմիր երես,
Երանի՜ թէ դուրս հանէ բոցը սրտէս, վա՛յ վա՛յ,
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դու ինձի.
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ. վա՛յ, վա՛յ

Փառանձեմս, նոր ատեց վատ մօտալին,
Կանանչեցաւ պատկերը սիրուն տեսքին. վա՛յ վա՛յ,
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դու. ինձի
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ վա՛յ վա՛յ։

Փառանձեմիս կայ պսակ շատ անթառամ,
Թէ ինձ լսէ հրաւէր պիտի կարդամ, վա՛յ վա՛յ։
Ա՛ռ ինձի Փառանձեմ, դու ինձի
Քո սիրովդ գգուէ ինձ Փառանձեմ վա՛յ, վա՛յ։

64

ԽԱՉԱՏՈՒՐ ՊԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տ Է Ս Տ Ա Ն.

Հազար ութ հարիւր եօթանասուն երկու թիւ,
Կարին քաղաքի մէջ կապրէր մի իշխան.
Նորա կարողութեան ճշմարիտ հաշիւ,
Միայն հասկացել էր Պետրոս Եզեկեան։

Անունն էր Խաչատուր պարթև ու հսկայ,
Բաւական տիտղոսներ վայելել էր նա,
Իւր տոհմի անունը շատը կ'ճանչնայ,
Որ էր աղքատասէր, վէհ Պաստրմաճեան։

Իւր կարողութիւնն, իրեն գումարը,
Պահում էր աղքատներ, ինչ որ կար թաղը
Ամէն մի պետքերը մինչև ի աղը.
Հրամանի համաձայն բաժնում էր ծառան։

Նա ծնուել էր այնտեղ, ապրում էր այնտեղ.
Անունը յիշվում էր թէ քաղաք թէ գեղ,
Պատվում էին նորան ամէն ազգ ու ցեղ,
Ճանաչում էր նորա բոլոր Ասիան։

Գործունեայ, հանճարեղ, ուժով. աշխատող,
Մսագործութենէ էր հարստացող,
Նա չէր սիրում գոռոզ ու հպարտացող,
Աշխատում էր ինքը, կ'տար հրաման։

Միայն եթէ ուներ մի պակասութիւն,
Անխտիր անում էր նա հայհոյութիւն,
Ծոյլի հետ պահում էր խիստ ատելութիւն.
Այս մասին չի գովել ոչ մի բանական։

Հաւատարիմ էր նա ամէն գործերուն.
Պարզ անարգել էր շատ սուտ փորձերուն
Կարկտան զարկել էր շատի ձորձերուն,
Դորա համար կրում էր շատ շքանշան։

Ունէր իրեն համար սեպհական տներ,
Կալուածների հողը արդար էր գներ,
Ինքը ճարտարապետ վարպետն էր շիներ,
Ունէր իրեն հանճար ու ձիրք բնական։

Շինեց երկու պանդոկ երկու յարկանի,
Մարմարիոն բաղանիք և լաւ պիտանի
Շինուել են դէմ ու դէմ հրապարակի,
Վայելեց այնտեղ ճաշ հերոս Լազարեան։

Հարիւր յիսուն կրպակներ նա շինել տուեց.
Շատ աղքատների լաւ սրտով սիրեց,
Դրամագլուխ տալով ընտանիք փրկեց,
Չ'թողեց որ լինին զոհ աղքատութեան։

Միայն մինը բաւականէ շատերուն.
Օրինակ է Ս. Յովհաննէս անուն.
Տասը ոսկին առաւ տիրեց սիրուհուն,
Ահա մի պատկերը նորա գթութեան։

Եկեղեցւոյն կ'տար շատ շատ լուսագին
Աղքատ ուսանողին հացի շորագին,
Գրչի, թղթի, գրքի ուրիշ պէտքերին
Որոշել էր արդէն մի այլ գանձարան։

Շինել տուած բաղնիքի ջուրը մտածեց
Զրառատ քաղաքից լաւ՝ զովը ընտրեց.
Մաքուր, առատաբուղխ, անուշը վճռեց,
Որ այն ջուրը լինի իրեն սեպհական։

Ջուրը կտակուած էր մի նպատակի,
Գիտէր, տեսչութիւնը որ կ'յարմարի,
Գնելուն շատերը չէին յօժարի,
Բայց այդ ջուրը եղաւ բով խռովութեան։

Ջուրը երբ ծախուեցաւ հակառակեցան,
Խորհուրդներ կազմեցին ու կատաղեցան,
Կեանքը վերցնելու խորհուրդ խորհեցան,
Վարձեցին մի հատը, ընտիր դաւաճան։

Տասնուհինգ օր առաջ կրակ ու բոցը
Զգին կալուածքի մէջ, կարծես թէ խոցը։
Ընկել ոչխարի մէջ քաշում է ծոցը,
Սաստիկ լոյս է ցրվել քաղաքի վերան։

Վառեցաւ կրպակներ հարիւրից աւել,
Քանի վաճառական են աղքատացել,
Կալուածքի տիրոջը հոգը չէր, նա էլ.
Նկատել էր արդէն նշան չարութեան։

Մի կողմից վառվում էր, միւսից շինվում էր,
Թշնամական սիրտը սաստիկ զինվում էր,
Կարծես պողպատից էր, որ դիմադրում էր.
Այդպէս դէմ յանդիման Նրանց զօրութեան

Հարկ չէ տարակուսիլ նորա ուժի դէմ,
Թող չ'հպարտանայ նա ապուշի դէմ.
Մենք հազար կուժ ունինք, նորա կուժի դէմ,
Ինչո՞ւ նշան ցոյց տանք յուսահատութեան։

Երկարացաւ սպանութեան խորհուրդը
Նորանց մէջ կար Հայը այլազգ ու քուրդը
Յոյնի Կաթոլիկի խրատն ու բուրդը,
Տուին դաստիկ բորբոք նորա ծաւալման։

Գումարելով ոսկիների մի գումար
Տուին սպանողին ու խնդրեցին ճար.
Քամէ նորա կեանքի, ոհ վերջին նժար,
Իրենց կամքի սրտի ձիրքի համաձայն.

Շաբաթ երեկոյին այն յիշեալ թուին,
Միւս օրը խաչի պասմուտ կիւրակին.
Մի թղթի կտոր որ իրեն յանձնեց մին,
Ահա քեզի նամակ իշխան պատուական։

Շինած բաղնիքի մօտ նստած ժամանակ,
Ստացաւ նամակը հանեց աղաղակ,
Նամակաբերը տուեց ձախ աչքին գնդակ.
Ասաց ահա քեզի նամակ սև տապան։

Իսկոյն վիթխարի պէս փռուեցաւ գետին,
Մեռա՛յ կանչեց բարձր և տուեց հոգին,

Տեսէք այն հսկային և կամ պարթևին,
Որ փռուել է գետին մեծ ծառի նման։

Ողորմի ասացէք բարի իշխանին,
Հարուստ ժլատները չարերը տանին.
Հոգևոր զաւակդ է խեղճուկ Ինային.
Քո տեղը թող լինի երկնային խորան։

65

ՂԱՐԻՊ ԵՒ ԼՈՒՍԻՆ.

Վ. Է Պ.

Ա՜խ ծանրաքայլ իմ լուսին կանգնիր կամարիդ վերայ,
Նկատիր իմ ճակատին, թէ ինչ գունով ներկեր կայ,
Չ՝կայ, չունիմ ես երբէք ո՛չ քոյր, ո՛չ հայր, և ո՛չ մայր
Կամ ցաւակից ցաւերիս արենակից մէկ եղբայր,
Ա՛յս, չ՝կայ իմ սրտիս, մի հարազատ սիրելի,
Դորա համար խեղճ հոգիս վառվում է անտանելի,
Բայց դու այսօր որ իմ դէմ, ինչպէս ընկեր կանգնել ես.
Մի պատասխան կ՝խնդրեմ, կամ մի նամակ բերել ես։
Երդում կ՝տամ քեզ ահա, որ չ՝զզուես ինձանից,
Եւ ո՛վ ո՛ր թէ ձանձրանայ, թող զրկուի իւր լոյսից,
Ի՞նչ ես կարծում դու ինձի, անտուն, անոք, կամ անտէր,
Չէ, այնպէս չէ սիրելի, սնիմ ես գուրթ, խիղճ և սէր,
Քո մօտերիդ ամպերը շրջապատել են մեզի,
Որ իմ սիրոյ լարերը, ձայնով չուղարկեմ քեզի։
Ծածկուել են աստղերը, սև ու թանձր ամպերով,
Եւ բազումքի շարքերդ, բաժանուել են կարգերով։

Ամպի նման մնում է, ինչպէս պարան ինչպէս լար,
Գիւղացին անուանում է, յարդ գողացող սանամայր։
Դու ամէնը լաւ գիտես, ափսէ նման իմ լուսին,
Ստեղծողդ թէ սիրես, պատասխանէ իմ ձայնին։
Արդեօք ինչ նոր լուր ունիս, իմ հօր տանից քոյրերից,
Ինձի եղիր դու ընկեր, թէ լուր ունիս մեր երկրից,
Տասներկու հատ երկար ձիգ, տարիները հաշուելով,
Մոռացել եմ ընտանիք, աղի արցունք թափելով։
Այն օրը երբ շեմից դուրս, դրի ոտս միայնակ,
Հազար մտքեր. անթիւ յոյս, յիշում էի նոյն գունակ,
Ունէի ես ինձ համար, քիչ ապրելու միջոցներ,
Ճարել էի ինձ յարմար, պատիւներ, համարումներ։
Եւ ես ինչպէս չ՝յիշեմ, իմ փառքերը որ թողի,
Իսկ տունս պարզ ու վսեմ, ընտանիք էր գովելի։
Ունէի ես ինձ համար, եզ. գոմշուկներ, ու կովեր.
Վեց հարիւր կթան ոչխար, ինձի բաւական կ՝օգներ
Մեր լեռների կատարից, մեղմիկ զեփիւռ շնչում էր,
Եւ կամ նարկէզ ու կակաչ, արդեօք հոտով բուրում էր,
Իսկ ձորերի մէջ տեղից, օձապտոյտ վտակներ,
Հոսում էին անընդհատ, կազմում էին լճակներ։
Կարմրախայտ ձկները, արծաթայլ ջրերում,
Որսում էին տղայքը, կարօտցել եմ ամէնուն,
Հնչվում էր զանգակներ, եկեղեցւոյ դմբէթից,
Կամ օրհնութեան մաղթանքներ, լսվում էր մենաստանից։
Իսկ մեր գիւղի արտերը, ցորեն ունէին լիք լիք,
Որ անկարօտ ուտէին, կարօտակեզ ընտանիք։
Երանի՜ թէ մի ըսպէ, շրջէի այն դաշտերում,
Ուր տեղ ուղիղ Եդեմեան, դրախտի հոտ է բուրում։
Պարտէզի ծառաստանում, արդեօք տեսա՞ր վարդենի,
Եւ պտղատու տնկերում, կա՞ր նշենի, թթենի։

Թռչուններիս երամը, շատ բացարած թևերը,
Թխսանստած պահում են մաքուր իրենց ձուերը,
Ալեզարդ հօր ձեռները, թուլացել դողդողում էր,
Մօրս պառաւ աչքերը, դեռ արցունքներ թափում էր
Ազգականներս քաջաւողջ, ճարում էին մի ապրուստ,
Որ ընտանիքը ամէն, չ'լինեն հացի կարօտ։
Ընկերներս սիրելի, ապրում էին միշտ սիրով,
Եւ կամ թէ ինձ ցանկալի, լիշում էին կարօտով,
Մսուրների վերայից, նժոյգները սև սպիտակ,
Խրխնջալով տրոփելով, կուզեն թռչիլ իմ հոգեակ։
Նորահաս օրիորդը, կուժը դրած ուսերին,
Գնում էր դէպի աղբիւր, հետ իւր սիրած կոյսերին
Լռում եմ ես այս բոպպէս, պատասխան տուր ով լուսին,
Սէրը ինչ է թէ գիտես, դու մի սիրեր Լակօնին։
Անտարբեր չեմ, հոգի ջան, բանական եմ քեզ սիրող,
Պահում եմ ես իմ ուխտը, ինձ համար Խաչնէ դրօշ։

ԼՈՒՍԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հնազանդ է լուսինը, իրեն տրված օրէնքին,
Եւ սիրով այցելում է, ամբողջ այս հողագնդին։
Արևելքից Արևմուտ, գնալով ես դիտում եմ,
Եւ չորս կողմը աշխարհիս, իմ աչքերով չափում եմ։
Ազատ կերպով անում եմ, երկնի վերայ ամէն քայլ,
տխուր ուրախ կ'բաժնեմ, ամէն մարդի սուգ ու փայլ։
Բայց երբ դու իմ ընթացքս, փափաքեցար յետացնել.
Եւ ինձ համար լուսինիս, լեղու տալ ու խօսեցնել։
Դու ասացիր թէ չունես, քեզի համար ցաւակից,
Ինչու համար հեռացար, սիրուհուդ անմեղ գրկից,

Թէ ուրիշ հացի համար, պատմում են թէ շատ մեծ է,
Բայց քո աչքով թէ տեսնես, քո բլիթից էլ փոքրէ։
Միթէ պարզ է ճակատս, քո ճակատից աւելի,
Քո մեղքերը դու գիտես, ով պարտական է քեզի,
Երբոր անցայ վերևից, վիճակները ես տեսայ,
դորա համար ընկերս, ինձ ասեց, «խա—աբէցայ»։
Քարը ծանր է իւր տեղը, քանի որ կայ ու մնայ,
Երբոր շարժի գլորի, լեռից ձորը կ'գնայ,
Հեռացու՛ր դու քո մտքից, յուսալ, մուրալ, ու խնդրել,
Թէ հաց ունիս ինքդ կեր, թէ ոչ պէտք է քեզ մեռնել։
Կամենում ես իմանալ, ընտանիքիդ վիճակը,
Ցանձնեցին ինձ, քեզ յանձնեմ, աղքատ տանդ կտակը։
Չեմ հեռացնել ամպերը, զով հով փչեն երեսիս,
Քանի որ փափաքածդ, ինձանից պիտի լսես,
Այդ ամպերը տեսնում ես, պարեր բռնած գնում են.
Որպէս զի ես չ'տեսնեմ, «աստղերս ուր մնում են»,
Երբոր անցայ ձեր երկրի, Խաչափայտի կատարից,
Այնտեղ փոքր ինչ կանգնելով, դիտում էի վերևից։
Պաղ ջրերի եզերքը, մինը տեսայ նստելով,
Վայելում էր չափազանց, զբաղուել էր «զամանով»,
Իսկ ձորերի անդունդը, դեղնագոյն մարգագետին,
Վիզը ծռած թաղուել են, ներքև անպետ հողերին։
Իսկ դաշտերից ոչ մի տեղ, չ'կար ցորեն ու գարի,
Դորա համար ամէն տեղ, թանգութիւն է այս տարի։
Իմ դիպած ժամանակը, մինը կանչեց «ով լուսին,։
Ո՛վ որ հարցուց բարև տար, փնտռէ, գտիր Խչէին.
Տասներեք է մօտենում, իմ համրած տարիները,
Էլ մեզի բաւական է, ուղարկած բարևները։
Թող ինքը դայ ու տեսնէ, իրեն Շօղոն ցաւալի.
Փեսայ Կարօն, Մուրատը, և Գէորգը ցաւալի,

Բաւական է որ խմէ, այդ օդիի ջրերը,
Կամ մեզի ուրախացնեն, նամակներն ու գրերը։
Ո՞վ իմ լուսին ցանկալի, մատաղ լինիմ ես քեզի,
Աղաչում են սիրելուս, որ չ՚մոռանայ մեզի։
Թողեց ամէն յոյսերը, կիսակատար ու թերի,
Թողե՞ց իրայ Շողոյին, կարօտ մի պատառ հացի։
Շատ խօստումներ արել է, այն իմ Խչէն տարաբաղդ,
Մինչև հիմայ և ոչ մին, ընաւ չուներցաւ աւարտ։
Թողեց ամէն փառքերը, թէ տուն, թէ տեղ կարասիք
Եւ ժանկոտած կախուել են, մառանների բանալիք։
Ո՛չ կով մնաց ոչ ոչխար, և ոչ եզներ աշխատող,
Պարտատէրը մեզ կարծեց, խաբեբայ կամ ստախօս։
Ոչխարների գումարից, և ոչ մինը չ՚մնաց,
Սրտացաւը ու դայլը, չ՚կշտացան մեր հօտից,
Էլ չ՚մնաց մի ապրուստ, գոնէ նորանով ապրենք,
Թէ կ՚մուրանք մի չոր հաց, բայց ամենս էլ կամաչենք։
Այն պտղատու արտերը, խոպանացած մնացին,
Ո՛չ մշակ կայ, ոչ մաճկալ, հեռու տեղեր գնացին։
Չ՚կայ մի լեռ ծաղկաւէտ, և ոչ բլուր կանանչօտ,
Կարծես Աստուած անիծեց, մեզի պատժեց շտապօք։
Հօտաւէտ ծաղիկները, թարշամեցան, խամրեցան,
Բնաւ, երբէք չ՚մնաց, Վարդ ու Մեխակ կամ Շուշան։
Տրտում տխուր հնչում է, զանկագները տաճարին,
Ուրիշները կ՚ողբան, վայ կ՚կարդան Շողոյին.
Իսկ պտղատու ծառերը, կտրեցինք ու վառեցինք,
Շատերին էլ արմատը, բոլորովին չորցուցինք։
Ուր որ տեսար Սոխակին, ասա, այժմ հերիք է,
Իրեն սիրած բոյնիցը, տխուր, տխուր, չ՚երգէ։
Թխսանստած բաղերը, ջրասնունդ ու լողուն,
Վիրաւորուած ընկել են, վայը նորանց ձագերուն,

Աղաւնեակի փոխարէն, գմբէթների վերայից,
Ագռաւները ձայն կ՚տան, տաճարների ճեղքերից,
Ընկերասէր կռունկը, չէ այցելել մինչ հիմայ,
Արդեօք նա էլ անուանեց, մեզի լալկան, անզգայ։
Աշնանասէր սարեակը, կտուրներից երգում է,
Ձօր ու գիշեր սուլելով, Շողոյի հետ ողբում է։
Քո ալեւոր հայրիկը, լալով՝ դողով խնդրում է,
Արիւն արցունք թափելով, միշտ իւր «Խչէն» յիշում է։
Արշալուսին խիստ կանուխ, մայրդ Աստուած կանչելով։
Որդի՛, որդի խնդրում է, ձեռը սրտին խփելով։
Եղբայրներդ միասին, արտը հնձած ժամանակ,
Անյայտացան չ՚գիտեմ, փախան թէ . . . . . .
Իսկ քոյրերիդ երկուսը, ուրիշների հետ փախան,
Ուր լինելը չիմացայ, հետքերն անյայտացան։
Միայն քրօջ վարսերը, գտայ բանջարանոցից,
Պահում ես իմ մօտը, երբոր հետքը երևեց։
Մի ազգական չ՚տեսայ, աղքատ Շողոն, մտածող,
Թողին ինձի ու փախան, չեղաւ ինձ ընկերացող։
Նժոյգները աչքի լոյս, արծած տեղից փախս ընկան,
Չ՚գիտեմ ո՞ւր գնացին, կամ ո՞րի ձեռը անցան։
Հարսնացու օրիորդի, ապարանջանն ու օղը,
Գարի հացի գին տուինք, նոյնպէս մետաքսէ քօղը,
Հարս որ տարան աղջկան, անուն պատիւ չ՚մնաց,
. . . . . Թիւ ու հաշիւ չ՚մնաց»։
Տեղեկութիւն ահա քեզ, դու ամենը լսեցիր,
Այնչափ խմէ որ հարբես, ինձ ինչո՞ւ կանգնեցուցիր,
Շատ ես խմում դու օղին, հանդստանալ պէտք է քեզ,
Կամ քեզ նման անփողին, ով կուզէ որ տեսակցես։
Երբ լուսինից այսպէս վատ, պատասխանը ստացաւ,
Գինետունը այցելեց, խմեց, հարբեց, քնացաւ,

Բայց թէ ինչպէս էր քնել, մռընփում էր չարաչար,
Կարծես եղներ ես մորթել, ու արիւնը դուրս կ'գար։

ՄԵՐ ՈՐԲԱՆԱԼԸ.

1878

66

Ես չ'գիտեմ ինչո՞ւ այս իմ սև բաղդըս,
Իմ ուրախ ժամերէս հեռացուց. զատեց,
Խմցուց ցաւի բաժակ, ու առաւ ուշս.
Յաւով լցեց սիրտս, ու բոցով վառեց։

Մի գիտցող կա՞յ արդեօք սիրոյ սահմանը,
Որ ես արի որբութեան հետ պայմանը,
Եղայ որբի դռան մեծ դռնապանը.
Ահա լոկ խնդալը մեզնից արգելեց։

Չեմ հաւատար երբէք, որ սիրտս խնդայ,
Որբութեան կնճիռը ճակտէս չի դնայ,
Խեղճ Ինայիս բաղդիս ակնարկին ընկայ.
Տուեց որբի հրաման, յետոյ ազատեց։

67

«ՓԷՔ ԽԱՐԱՊ ՕԼՏՈՒՄ» ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Չեմ ուրանալ պիտի սիրեմ յաւիտեան,
Դու ես յոյսս ով Մաքրուհիդ աննման.
Թաց աչքերս քեզ փնտռում են սիրեկան.
Շատ սիրուն է շէկ մազերով այտերդ,
Սև ունքերդդ գրաւիչ են աչերդ։

Գթութիւնը միթէ օրէնք չէ՞ ձեզի,
Ես խնդրում են բարեհաճէք գալ մեզի.
Յոյս ունիմ որ նայենք իրար երեսի։ (շատ սիրունէ)

Ես էլ մե՞ղք եմ, խնդրեմ խղճաս անբաղդիս,
Գէթ մի րոպպէ դու նկատիր վիճակիս.
Ու վախճան տուր այս բիւրաւոր տանջանքիս։
Շատ սիրուն է շէկ մազերով այտերդ,

68

ՊԻՐ ԹԱՐԱՖՏԱՆ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Նկատո՞ւմ ես, որ հարբել եմ տրտմութեան վտակներից.
Սկսել է բաժանուելու իմ հոգիս երակներից.
Գիշեր ցերեկ տանջվում եմ սրտիս թանձր մաղձերից,
Ազատէ ինձ սէրն Աստուծոյ բաւ է տանեմ քո ցաւը։

Դու գիտես որ անթիւ վերքեր բացիր լեզուովդ անիրա՛ւ,
Տեսս աչքերիս արտասունքը որ վազում են անզրաւ,
Արի՞ օգնէ քո սիրածին թէ գթած ես անպարսաւ,
Ազատէ ինձ սէրն Աստուծոյ բաւէ տանեմ քո ցաւը։

69

ԹԷՔԹԷՏԷ ՏԷՎՐԻՇԼԷՐ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Սիրոյդ կրակներով քանի՞ մեկ վառիմ.
Միշտ քեզի յիշելով տապիմ չարչարուիմ.
Զատուել եմ քեզանից էլ ինչո՞ւ ապրիմ։
Տրտում սրտիս դարման չ'կրցայ ճարել,
Թող մեռնի՞ մատնիչը որ նազելիս չ'կրցայ
զգուել

Մաքուր պալատներում նստել կ'դիտես,
Անցուդարձ անելուս սրտով կ'ներես,
Միայնակ ապրելով սև Բուն կ'սիրես (տրտում)

Պալատներիդ դէմն էր անշուք տնակս,
Խնդալով՝ պարելով մտիր սենեակս,
Թէ սիրում ես վարդը, դու ես սոխակս (տրտում.)։

Երբ ամէն առաւօտ կ'գաս ու կերթաս՝
Խմիր իմ արիւնս գօնէ կշտանաս.
Թէ սրտով չես սիրում, յետոյ կ'զղջաս։ (տրտում)։

70

ԱԹԱՇԻ ՍՈՒՋԱՆ ԹԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Անմարելի կրակներով կամենում ես ինձ վառել,
Բայց քո անբաղդ հարազատդ մի բուռ մոխիր է դառել.
Թող դան տեսնեն ընկերներս որ աչքերս են ծովացել,
Որովհետև առան ձեռքէս գեղաժպիտ սիրուհիս։
Ո՜հ թափէք աչքեր, թափէք արցունք,
Թռաւ ձեռքից Աղաւնիս,
Արտասունքս թող շատանան,
Գերի գնաց Նազելիս։

Բաւականէ չեմ ցանկանալ աշխարհի երջանկութեան,
Խնճոյքների հետ չեմ փոխել իմ մի բոպպէն տրտմութեան.
Պարտէզս աւերակ դարձաւ շնորհիւ սիրահարութեան.
Զարդարեց հառաչանքներով օրերս ուրախութեան։
Ո՜հ թափէք աչքեր Լայլն.։

71

ՓՈՒՆԱՐՆ ՊԱՇՆՏԱՑ ՂԱԶԱՐ ԹԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Աղբիւրի գլուխը թռչուն,
Երգում են, պարում են կոյսերը սիրուն,
Երանի ծնող մօրերուն.
Օրիորդ աննման սիրեցի քեզի
Քո սիրոյդ կրակով վառեցիր ինձի։

Աղբիւրի գլուխը ծաղիկ,
Սիրելիս, նազելիս դու ես մի հատիկ,
Ես սոխակ դու վարդի թերթիկ, (օրիորդ աննման.)

Աղբիւրի գլուխն ես բազմել,
Սիրուհիս, նազելիս, խումբեր ես կազմել.
Ո՞վ կրնայ քեզ պէս վստահել։ (օրիորդ աննման.)

72

ՅՈՒՍԱՀԱՏԻ ԵՐԳԸ

ՆԷ ԵՕԳՈՒՇՆ ՏԻՊՆՏԷ ԻՄ ԹԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ.

Բարձր էի լեռան նման
Բայց ընկել եմ հողի վերան,
Ինձի մահը ինչ արժան է.
Նոր անում եմ սիրոյ շրջան
Ո՞վ կերազէր, ո՞վ կ'յուսար
Ծառան տիրոջ մահ սպառնար,
Վա՜յ ձեզ սիրոյ դաւաճաններ
Աշխարհս ձեզի չի մնար։

Գետի նման չէի վազել,
Ծովերի մէջ չէի թափուել.

Բիւր գրագիր որ եթէ գար.
Կրկին չէի ես բաժանուել։ (ով կերազեր Լայլն.)։

Գեղեցկութեան զարդարանքս,
Կանանչ, կարմիր, պաճուճանքս,
Շուտ սևացան, հիմայ անշուք
Ողբեր եղան գովասանքս (ով կերազեր Լայլն.)։

73

Փ Ո Ղ

Անիրաւ փող. ինչքը չարիր, լաւութիւն թէ վատութիւն,
Փող անունը ունեցել է հազար ու մէկ մեկնութիւն,
Փողը գիտէ, երգել. ձայնել. ուրախացնել տրտմեցնել,
Պարել, խնդալ, զուարճացնել, և կամ հանել մորմոքներ։
Բայց դու այն չես, ոչ երգ ունիս և ոչ ձայն
Ո՛չ էլ փայտ ես, այլ մետաղ ես սոսկական։

Ո՛վ ունեցաւ քեզ իւր մօտը հպարտացաւ, վեսացաւ,
Մօռանալով Արարիչը, հին ընկերը մօռացաւ,
Սրտով եղաւ քեզի գրաստ, ելար նորա քամակին,
Դու տիրացար իմ եղբօրս վայր իմ աշխատանքին,
Բայց դու այն չես, դու չես կարող տէր լինել,
Որչափ փախչես, չես կարող անտէր լինել։

Քեզ ունեցան իմ պապերը, բայց մոռացան ոչխարը,
Քեզ համբելով պարապեցան, գայլը մտաւ կաճառը.
Անցուպ տեսնելով հովիւին պատառեցին փարախը.
Անմայր մնացին գառները, փախան լեռան կատարը,
Բայց դու այն չես, դու չես կարող ցուպ լինել,
Չեմ սխալիլ կրնաս ահ ու դող լինել։

Եթէ փոխեմ քո «Ղ» տառը ասա՛ տեսնեմ ինչ ես դու,
Այդ կուզէիր դու իմանալ գարշելի ես շատ ազդու,
Վերջացնելով իմ կարծիքը կուզեմ լսել քեզանից.
Ի՞նչ գաղաբար կազմել ես դու, քեզ պատահած մարդկանցից։
Բայց կարճ կապիր հասկացել եմ ես քեզի
Շուտ աւարտէ քո խօսքերը վայր տուիր դու ինձի։

Ասաց փողը, «ես փող եմ, փող, և ես պատուոյ եմ արժան,
Մինչև հիմայ տիրացել եմ բիւր ու անթիւ գովութեան,
Ես արիւն եմ, ես կռիւ եմ, և ես մահ եմ շատ անգամ.
Բայց թէ լինիս դու խելացի քեզ յաւիտեան կեանք կ'տամ։
Եւ կամ ցրվես օգուտ խեղճի տնանկի,
Քեզ կ'սիրեմ և չես բնաւ սնանկի»։

74

ՄԷՀՄԱՆ ՆԱՄ ՊԻՐՊԱՏԻ ՍՈՒ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Եղել եմ քեզի սիրահար,
Ինձ սիրելու դու չէս յօժար,
Ծարաւել եմ ու չես գթար,
Քո գերիդ եմ մի գաւաթ ջուր,
Քնքուշ ձեռներովդ հասուր։

Սիրոյդ ծովը միշտ լողալով,
Ցիշում եմ քեզ դողդողալով,
Ինչպէս ապրիմ պապակելով, (քո գերիդ եմ.)
Խորոված եմ սիրոյդ համար.
Վառուել եմ քեզի անդադար.
Սրտիս բոցին դու գտիր ճար (քո գերիդ.)

Աշխատանքս մի՛ տանիր զուր,
Նուիրէ ինձ սիրոյ համբոյր,
Թէ չես սիրում, գոնէ մահ տուր (քո գերիդ եմ.)

75

ԳԱՐԱ ԳԱՇԼՄ ԳԱՐԱ ԿԷՕԶԼԻՒՄ ՏՐ ՍԷՊԷՊ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Մ՚ոլորական՝ յուսահատուած ման գալուս
Իմ նազելիս՝ Աղաւնեակս է պատճառը,
Նորա համար գիշեր ցերեկ ողբալուս.
Իմ սև բաղդս և իմ կեանքս է պատճառը,

Ես սիրեցի՝ նա հեռացաւ ինձանից,
Նա է յոյսս՝ չունիմ ուրիշ նրանից,
Ես մօտացայ՝ նա արտաքսեց իրանից,
Իզուր տեղը արած ջանքսէ պատճառը։

Բանար փականքը իւր փափուկ շորերուն.
Ես անփորձ եմ նորա անթիւ փորձերուն.
Կարելի է զղջա արած գործերուն.
Բայց իմ սէրս հառաչանքս է պատճառը։

76

ՈՒԶՈՒՆ ՕԼՈՒՐ, ՍՏԱՄՊՕԼՈՒՆ ՍԷԼՎԻՍԻ ԽԱՂԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Կանանչ կոկոն դու չ՚բացուած մի վարդ ես,
Սիրահարիդ թագ ու պսակ պարծանք ես,
Ինձի համար շատ թանկագին մեծ զարդ ես,
Ո՞հ քեզ համար եղել եմ ես սիրահար։

Ինքդ ընտիր, ցեղդ ընտիր մի հատիկ,
Ո՞ւր տեղ տեսար հոտով անթառամ ծաղիկ,
Նրա հոտն էլ առար դու կրկնապատիկ. (ո՞հ քեզ համար.)

Խնդրեմ լինիս ինձի ընկեր օգնական.
Գիտես որ ես մնացի անպահապան,
Դու չես թողնել ստեղծողին դատաստան (ո՞հ քեզ համար.)

77

ԵՂԲՕՐ ՆԱՄԱԿԸ ԴԷՊԻ ՔՐՈՋԸ.

Թէ ինքս պաղած, բայց սիրտս վառած,
Ընկել եմ պանտուխտ, իմ բաղդէս է այն,
Խիստ յուսահատուած, ու սիրտս ցրուած,
Եղել իմ անուխտ, իմ բաղդէս է այն։

Միայնակ, տխուր, գուցէ յուսահատ,
Կարօտով յիշեմ քեզ քոյր անարատ,
Թէ ըլել է տունս, տեղս հարազատ.
Զունեցայ Սանտուխտ իմ բաղդես է այն։

Ուխտել եմ թափել արտասունք դառն
Շնագայլը կերաւ Ինաու գառն,
Սիրոյ ու կարօտի քաղցրաձայն տառն,
Սրտումս կան զոյգ իմ բաղդէս է այն։

78

ԶՈՒՔԱՆՋԻ ԳԱԼԸ

Երբոր մտաւ դռնակս ներս,
Շուտ բաժանեց եղբայրներէս,
Բնականից էլ չամաչեց,
Ահա քեզի մի աներես։

Չ՚թողեց սիպտակ բազմոցս,
Շղթայ դրեց պարանոցս.
Խիստ անպէտ գոյներով ներկեց,
Սեղանի մաքուր ծածկոցս։

Սիրտս թողուցիր վիրաւոր,
Չ'գտայ դարման զօրաւոր.
Աղօթեցիր որ ես մեռնեմ,
Խլես իմ կայքերս բոլոր։

79

ՆՈՒԷՐ Շ.-ԻՆ

Հարայ Նաշի Էալինտէն խաղի եղանակով.

Կարմիր վարդագոյն շուշան, ինչո՞ւ ես գունաթափուել,
Ես քեզի վարդանման էի պահել խնամել,
Պարարտ ու բերրի հողում, քո արմատը տնկելով,
Միթէ չէ՞ զովացնում, անուշ անուշ ջրերով։
Երբոր ունեցար արմատ, հօտաւէտ ու ծաղկալից.
Եւ միթէ չէր հարազատ, քո ջրերը ականից,
Եփրատի անուշ ջրով, առուներդ էին լիք,
Քեզանից սկսելով, ջրում էին, անուշիկ։
Եթէ ջուրդ չէր բաւել, Երասխից կ'տանէի,
Ու Տիգրիսից անարգել, վտակներ կ'կազմէի,
Կանանչացար ծաղկեցար, վարդի մեխակի նման,
Տերևներդ կ'ցնծար, պարող կաքաւի նման։
Բայց դու ընաւ չասացիր, թառամելուդ պատճառը
Եւ ո՛չ ոքին չ'տուիր, անուշ հոտիդ պաշարը,
Ես գիտէի հաստատուն, լաւ չէր քո տեղը փոխել,
Ո՞վ անիծեց քեզ սիրուն, օտար հողում տնկուել։
Եւ ա՛նդրանիկ Շուշանին, արմատն ուրիշ տեղ դրէք,
Նորա ջուրը և հոգին, դրացու ջրից բերէք,
Որչափ որ այդ ջրերը, եկան լայն առուներով,
Վարձկան պարտիզպանները, թողուցին անապահով,

Կոկոնի մէջ թառամած, խամրած մնացիր Շուշան,
Եւ չէիր արմատացած, տերևներդ թափեցան,
Կանանչի մէջ մնալով, քեզպէս անտէր Շուշանը,
Միշտ մնացիր կարօտով, կարեցիր քո պատանը։
Բայց թէ մի բոյս ինչ որ է, ընտիր մշակ չունենայ,
Վկայել ո՞վ կարող է թէ նա պէտք է զօրանայ։

80

ԳԻՒՂԱՑԻՈՅ ՀՈՎԻՒԸ ԵՒ ՀՕՏԸ.

Վ. Է Պ Ի Կ

Նոր գարուն էր՝
Քեհայ Սարգիսը ասաց դրացւոց
Շո՛ւտ հաւաքուեցէք, էլ չտաք միջոց
Ա՛հա գարունը եկել, հասել է
Ո՛չխարի, գառի, հովիւը պէտք է,
Քանի հովիւներ եկել են արդէն,
Որ ձեր կամքերին նստել, կըսպասեն,
Որին որ կուզէք, վարձէք, թող մնայ,
Որն որ չէք վարձել, թող ելնէ գնայ,
Քեհայի խօսքի մտքի համաձայն,
Ամէն դրացիք մի տեղ ժողվեցան,

Ինչպէս են վարձում Հովիւը, նոքա,
Կամ արդիւնքն ինչ է վերջերը կարդա,
Ամէնի դէմը, յայտնի, յանդիման,
Սկսեց խօսել, մեր Սարգիս քեհան,
Ահա դրացիք, թէ գառ թէ ոչխար,
Գոմը մնացին մտածեցէք ճար։
Ամէն տարուայ պէս կռիւ աղաղակ,
Զանէք դրացիք, լսեցէք, տղայք,
Ամօթէ մեզի գոնէ մտածենք,
Դրացի գիւղերից գոնէ ամաչենք,
Քանիսը եկել ձեզի կսպասեն,
Թէ ինչ պայմանով Հովիւ կ'վարձեն,
Որչափ փորձեցինք որ լաւը գտնենք,
Այնչափ էլ խեղճը վատ կ'ճարենք,
Ահա գիւղացիք ամէնիդ առաջև,
Յայտնում եմ միտքս պարզ ու ակներև
Անցեալ փորձերը ինձի վկայեն,
Ով որ ուզի կուզէ թող նորանց վարձեն։
Կ'գայ ժամանակ և կ'գայ մի օր,
Որ իմ խօսքերը կատարվեն բոլոր,
Մեր Սիմօն քեհան արդէն ընտրել է,
Սահրատը, Հովիւ, նա հռչակել է,
Եւ ամեն տարուայ կարգի համաձայն
Շատ դականակներ հրապարակ եկան
Երբ որ ընտրեցին իրենց Հովիւը
Արդէն վերջացաւ իրենց հաշիւը։
Կարծես պատիժ կայ Խաչլիցւոց վերայ
Ով Հովիւ եղաւ, էլ բան չէր մնայ
Սովորում էր նա ամեն ինչ գործը,
Արդէն խօսվումէ ճշմարիտ փորձը։

Առաւ ոչխարը, տարաւ լեռները,
Ուրախութիւնից դողաց ձեռները.
Նա գոռաց ահեղ լեռների միջից
Առաւ պատասխան անել ձորերից։
Ահա Սահրատը Հովիւ է դառել,
Կապանակն ուսին ցուպը ձեռն առել.
Բայց շատ քիչ էին, թէ ոչխարները
Եօթ հարիւր էին նոյն չափ էլ գառները։
Միամտութիւնն խեղճուկ ոչխարի,
Բնական բան է, այդ կը պատմուի,
Կրկին ոչխարը կարող չէ գիտնալ
Եւ կամ հեռանալ ու զգուշանալ։
Ոչխարը գիտէ, ուտել կ'շտանալ
Իւր գառի համար կաթ, սնունդ հոգալ.
Այդպէս ման գալով սարեր ու ձորեր,
Միշտ արածում էր և այնպէս կապրէր։
Օրերը ամառ եղանակը շոք,
Անցել էր գարունն անում էին հոգ.
Ոչխարի սիրտը արևն էր տապում,
Կրկին Սահրատը պտուկն էր քամում։
Արածում էին անջուր լեռան ծայր
Օրը մի անգամ ջուրի մօտ կ'գար
Բայց ոչխարները կրկին հևալով,
Նստել, կզբաղուեն լոկ որոջալով։
Բացի դրանից չէին իմանում,
Թէ գայլերն հեռուից խորհուրդ են կազմում.
Որ գան ու տանեն իրենց պաշարը.
Գայլը, լաւ գիտէ նա իրեն ճարը։
Սահրատը ունի մի լաւ նպատակ
Ոչխարի բրդից հագնել կապանակ

Օրն հինգ անգամ կաթը ուտում էր,
Եւ երբ կշտանում, ընկնում քնում էր,
Քնել էր, չգիտէր, չգիտէր ինչ կար
Խորխոր ցնցումով նա կ'մռըփար,
Մի քանի ցոյցեր եղան գայլերից,
Կրկին Սահրատը չ'արթնցաւ քնից,
Գայլերը խմբով հեռուից կանգնել,
Մութ մութ գիշերին են ապաւինել.
Վիճում են տաք տաք խորհուրդ են կազմում,
Թէ մենք միս չուտենք, ինչո՞ւ ենք ապրում։
Ահա գնում են կարապետները,
Գնում են գատել՝ ջոկել գառները,
Լաւ է մի քանին տան ու ազատուեն,
Ո՛չ թէ ամէնը գայլի կեր լինեն.
Իսկ դուք ոչխարներ գամբռներ չունէք,
Գնացէք նորանց առաջ խառնեցէք
Եթէ կարող է ձեզի պաշտպանել,
Քանի որ նորան դուք կաթ էք տուել,
Տեսնելով գործը Ղաշղայ *) ոչխարը,
Ասաց ո՛վ ընկերք այս է մեր ճարը,
Երկու չարութեան փոքրը ընտրեցէք,
Եւ մեզի վերայ լաւ մտածեցէք,
Զուր է, ընկերներ հանեցէք բաժին,
Երթայ հանդարտի գայլերի ոգին
Ահա եկել են, խնդրում են պաշար,
Կարծես գառ ծնանք մենք նորանց համար,
Կարապետները կանգնած ձորակում,
Ահեղ ձայներով անում են երդում.

*) Ղաշղայ նշանակում է Ճակատը սպիտակ, իսկ մեր տեղերը ուրիշ գոյն։

Երդվում ենք ահա մենք մեր կեանքերով,
Կերդվենք Մայիսի զով անձրևներով,
Արէք այս անգամ մեզ բաժին տուէք
Գոնէ գնացէք, ու արածեցէք,
Գիտէք որ դուք էք գայլերիս սպաս,
Կամ ձեր չ'տալը ձեզի է վնաս։
Ղաշղայ ոչխարի գառը իւր մօտն էր
Ինքը իւր գլխով միշտ կ'մտրակեր,
Կարծես թէ խմբից կուզէր բաժանել
Եւ իրայ ձեռով գայլերին յանձնել
Բայց թէ՞նչ հառաչանք, թէ՞նչ լաց թէ՞նչ վիճակ,
Ի՞նչ սաստիկ մայել, կամ թէ՞նչ աղաղակ.
Մայել ու փախչել սկսել էին,
Եւ քանիսն արդէն, ճանկ ընկել էին,
Այն կողմը գառների ձայնը աղէկէզ,
'Իգուրթ էր շարժում թռչուն ու աղուէս,
Ահա տեսարան շատ յուսակտուր,
Խիստ անտանելի և խիստ ընդհանուր
Հովիւ Սահրատը սաստիկ շուարած,
Կանչեց գամբռերին շատ յուսահատած,
Ձեալլոյ հա՛ ճեալլոյ *) կռթի հա պեարտա *)
Կռթի մի փախչիլ ու ետ մի՛ մնա՛,
Ընկան գայլերը անտէր հօտի մէջ,
Եւ նոյն բոպպէում վազեց արեան դետ,
Բայց թէ թէ՞նչ օրէ ոչխարի համար,
Գայլի ձեռն ընկել այդպէս չարաչար,
Կարմիր ոչխարը խոշոր պոզերով,
Ասաց ամէնին վիրաւոր գլխով,

*) Ճեալլոյ ինչպէս անուանում են գամբռները այսպէս մի անունով, իսկ կռթի նշանակում է բռնել և պեարտա՝ թողնել։

Ահա գնում եմ ես գայլերի հետ,
Գոնէ թող ապրի գառս ձեզի հետ,
Ասաց գառնուկին «գառնուկ կաց բարով,
Դու աւել կապրիս ինձնից տասը տարով,
Մի տրտմիր գառնիկ քո զոհը ես եմ,
Քո կեանքդ կեանքէս նախադասում եմ։
Մի լար իմ գառնիկ պէտք չէ քեզ կաթը,
Գնա արածիր, անդաստանները,
Ապրիր ու յիշէ քո մայրը մեռած,
Որ գայլի ճանկը կամ ձեռն է ընկած»։
Ընդ միջեց գառը լալով «իմ մայրիկ
Իմ բարեկամս դու ես մի հատիկ,
Եթէ քեզանից այսպէս զրկուիմ,
Նրանից յետոյ ես ինչպէս ապրեմ,
Քո արգանդումդ ինձի պահեցիր,
Ծնար, սիրեցիր, անուշ կաթ տուիր,
Սնունդս առայ, երբոր մեծացայ
Քեզի ով ասաց, թէ թող ու գնայ։
Քո տեղը մայրիկ պէտք է ես գնամ
Որ այդ գայլերին կերակուր դառնամ
Դու եկող տարի մի գառ կունենաս
Եւ իմ կարօտը նրանից կստանաս»։
Դուրս եկան ահա մի քանի ոչխար
Կարմիր ու Մարալ, Ոնպոզ կամ Սարդար
Թէ դիմադրում են անգութ գայլերին
Վայ նրանց կեանքին, արած ջանքերին։
Ի՞նչ վստահութիւն, կամ թէ ինչ հոգի
Միամիտ ոչխարն զարնում է գայլի,
Բայց բնական է ամեն արարած
Ունի զգացում իրեն համեմատ։

Ընկան այդ չորսը, անցել է մի ժամ.
Եւ պառաւ Սահրէն զոհ է այս անգամ,
Սահրէ ոչխարը եկաւ, նկատէք,
Այդ էլ բաժին է. դուք հեռու կացէք,
Եւ երբ նա մտաւ փարախը ներկած
Մնաց շուարած, մնաց այլայլած,
Կարծես բանական է, կամ զգայուն,
Որ աչքերիցը արցունք են ցայտում,
Եւ կամ թէ ասեր», ով իմ ընկերներ,
Ձեր արիւնները Սահրէն թող լզէր,
Դուք եղաք այդպէս գայլի կերակուր,
Սահրէի սիրտը ձգի՞ք անշէջ հուր,
Թողե՞լ էք խոտը արևի առաջ,
Թողե՞լ էք անդը փարախի դիմաց,
Թողե՞լ էք աղը, ձեր մրսի համը,
Եւ ո՞ւր է գնում այդ ձեր երամը,
Ա՞խ ո՞ւր էք գնում գառներդ թողած,
Մեղմիկ՝ հովաշունչ ծառները թողած,
Որոնց ներքևը որոշ անելով,
Հովանում էիք նստած երամով,
Մնացի՞ն գառներդ անմայր, անսնունդ,
Շուտով գնում էք մոռնալով ձեր ուխտ,
Որ ուխտել էիք գառներ ունենալ,
Ծնունդից յետոյ սնունդը հոգալ։
Անէ՞ծք ոչխարի ծնած օրերին,
Բնաւ չեն քնիլ երկու թշնամին,
Մինը դանակը՝ երկրորդը գայլը
Դորանք են ոչխարի մահուանը փայլը,
Ոչխարի՞ հօտեր, ձեզ հետ միասին,
Արածեց Սահրէն լեռների գլխին,

Չէք մեղադրել, տուէ մեծ բաժին,
Իմ անմեղ հոտից այդպէս գայլերին.
Պառաւ ոչխար եմ ես անօգնական
Ումից ես խնդրեմ որ ինձի գառ տան.
Որ ես ախ գոնէ նոցա հետ արծեմ,
Ման գամ անպտուղ մինչև որ մեռնեմ։
Կաթ չունիմ որ տամ այս որբ գառներին
Մայում են սաստիկ, քաղվեց իմ հոգին,
Կամ թէ չ'հոգամ, գառները արդէն,
Ոչ թէ այս օրից վաղուց մեռել են,
Յուսահատ գառներ, ինչ էք մտածում,
Կորուստի թիւը ով է իմանում,
Անցան հարիւրներ, մօտ է հազարի,
Անմիս թող ապրին մարդիկ այս տարի»։
Երևաց ահա խաժ աչքեր գառը,
Կաթ էր որոնում, թէ մեռած մայրը
Կարող էր առնել որոշակի լուր
Թէ մայրդ մեռաւ վայը գլխիդ տուր,
Երբ նա կանգնել էր փարախի դէմը.
Եւ աշխատում էր անցնելու շէմը,
Բայց թէ ինչ օգուտ ուժից ընկել էր,
Եւ աջ ոտիցը վիրաւորուել էր,
Ընկաւ շէմի տակ, տքում էր սաստիկ,
Ո՛չ դեղ ունէր, ոչ ընկեր մէկ հատիկ
Կարծես սրտիցը ախ ախ քաշելով
Վերջին խօսքն ասում էր վայեր կարդալով,
«Գիտեմ չեմ ապրիլ, և ես մեռնում եմ,
Վերջին բոպպէս է, շունչս փչում եմ,
Հազար երանի մէկը ինձ տեսներ,
Եւ իմ վերքերը փոքր ինչ դարմանէր

Մեռնում եմ ահա անդի կարօտով
Ահա մեռնում եմ արեան շոգիով
Հիմայ ուր գնամ, և ում ինչ ասեմ,
Իմ բաղդն այս է, ես պիտի կրեմ.
Առողջանալու մի հնար չունիմ,
Որ գոնէ ոտով գնամ արածեմ,
Խաժ գառն ես եմ, սիրուն փառաւոր,
Գայլի կանկերից եղայ վիրաւոր,
Յոյս կայ ինձ արդեօք առողջանալու,
Կրկին լեռները ելնել ման գալու,
Ո՛չ, ոչ, էլ չունիմ. . . գնաց ամեն ջանք,
Իզուր է գնում ամէն աշխատանք»,
Բայց գոհ են գայլերն իրենց պաշարից
Որ առել էին ընտրուածներից,
Առան, հեռացան թէ ուտելիքը,
Եւ թէ վիրաւոր, պարարտ ու լիքը
Գամբռները ևս վիրաւոր ընկած
Լիզում էին իրանց վերքը պատռուած,
Ամէն մի Գամբռ իրեն բժիշկ է,
Եւ իրեն վերքը ինքը կ'բժշկէ,
Եւ երբ Սահրատը այս լուրը բերեց
Գործի դէպքերը քիհայի պատմեց,
Գիւղացիք շուտով հասան օգնութեան,
Գայլերի հետքը բնաւ չ'գտան,
Գիւղ վերադարձան կազմեցին ժողով,
Ոչ մէկի սիրտը չկար սէր, գորով,
Բղավում էին ինչպէս Բաբելոն,
Մի մարդ չէր ճարվում, հանգիստ կամ զգոն։
Միայն Սիմոն քեհան նստել էր մենակ,
Տրտում շատ տխուր, սաստիկ յուսահատ,

Գիտեր գործերի կանուխ ու ուշը,
Անշուշտ պիտի կոտրէր իւր գլխին կուժը։
Չէր լսվում բնաւ մի ձայն հաստատուն,
Թէ ո՞վ է խօսում, կամ ո՞վ է լսում։
Ամէնի խօսքը Սիմոն քեհանէր,
Որ այդ հովիւը ինքը վարձել էր,
Շատ երկար լռեց խեղճ Սիմոն քեհան,
Չ'տուեց բնաւ մէկին պատասխան,
Վերջապէս իրեն ճարը կտրեցաւ,
Գիւղացիներին այսպէս խօսեցաւ.
«Ա՜յ դրացիներ, դուք նոր չէք եկել
Ո՞ր տարին անկռիւ հովիւ էք վարձել
Ոչ միայն հովիւ այլ ձեր ամէն բան
Այսպէս է եկել, այսպէս կ'գնան,
Դուք էիք վարձում միշտ ամէն տարի,
Միշտ պատահել էք այսպէս վնասի
Ես ինչ մեղք ունիմ, դուք մեղաւոր էք
Որ անփորձի հետ գործի կ'սկսէք»,
Բոլոր գիւղացիք շատ տրտնջացին,
Երբ Սիմոն քեհէից խօսքը լսեցին,
Պատճառը դու ես, ըսելով նրան,
Ձեռք առան, սաստիկ ծեծել սկսան։
Եղան երկու կողմ, կռիւն սկսաւ,
Եւ շատ գլուխներ թեւեր չարդուաւ,
Մինչև որ հասաւ կառավտրութեան,
Ամէն մին մէկ ճանապարհ առան ու փախան,
Աշխատում ենք միշտ և կրկին քաղցած,
Երբ ճշմարտութիւն չէ արմատացած,
Չեն նայիլ նոքա ո՛չ ձախ և ո՛չ աջ,
Ահա մի պատկեր մարդկութեան առաջ։

ՅԱՆԿ

ԵՐԳԵՐԻ ԹԻՒԸ

1 Աբգարը 10
2 Անա բարեկենդան 50
3 Աղբիւրի գլուխը 71
4 Այսօր այսօր եղուց եղուց 9
5 Անբաղդ օրիորդ 46
6 Անիւներ ժտմացոյցիս 44
7 Անհաւատարիմ ընկեր 13
8 Անմարելի կրակներով 70
9 Արտաւազդի շղթան 19
10 Բարեւեցէք ազնուական ցեղ կ'դայ 24
11 Բարի իշխան 33
12 Բարձր էի լեռան նման 72
13 Բարով եկաք հազար բարով 22
14 Գարուն եկաւ 28
15 Գեթսեմանի ձորը 37
16 Գինին 12
17 Գիւղացւոց հովիւը եւ հօտը (վէպիկ) 80
19 Եղբօր նամակը 77
20 Եղել եմ քեզի սիրահար 74
21 Եղնիկ 53
22 Երանի կ'տայ Մարգարէն 5
23 Երդում կանեմ 47
24 Երկայն ճիգ ծառի տակ 49

25 Երջանիկ է այն պարտեզը 3
26 Զօրանոցի գալը 78
27 Թէ ինձ յարմար 55
28 Իմ սէրը 29
29 Իմ սրինգը 1
30 Ինձի բաւական է 41
31 Լալ ու զար 25
32 Խաչատուր պաստրմաճեանցի կենսագրութիւնից . . 64
33 Կանանչ կոկոն 76
34 Կարմիր վարդագոյն Շուշան 79
35 Ծերացել ես մայր իմ քաղցրիկ 56
36 Ծոյլ 61
37 Ծոյլին դու դուր չես դալ 43
38 Համառասար ընկեր էր 34
39 Հին Զէնրին 58
40 ՂԱՐԻՊ եւ ԼՈՒՍԻՆ (վեպ) 65
41 Մեխակը 45
42 Մեր որբանոցը 66
43 Մի գեղեցիկ տեսայ 15
44 Մի վստանիր 40
45 Մոլորական լուսանատոռած մանդալուս 75
46 Ցաջողակ բաղդ 21
47 Ցիչատակ Բաֆֆիին 2
48 Նժոյգս 54
49 Նկատում ես 68
50 Նուէր Փառանձեմիդ 63
51 Նուէր քրոջ 23
52 Շաւարշանի հողի վերան 38
53 Ով կանուխ էլաւ առաւօտ 39
54 Ով ուրախ Կուռնկ 31
55 Որբ օրիորդ 51
56 Որչափ որ ինձ ատես 11
57 Ուսանող 8
58 Ուսանող օրիորդ 7

59 Ո՞ւր մնացիր որդիս 17
60 Զեմ ուրանալ 67
61 Պառաւ կին 30
62 Պատանական սիրելիին 62
63 Զրի նման սպիտակ ես 35
64 Սիրահարը 20
65 Սիրելիներ ելէք, դիմաւորէցէք 42
66 Սիրոյդ դրան դէմը 27
67 Սիրոյդ կրակներով 69
68 Սիրուն 14
69 Սիրուհիների համար 32
70 Սոխակին 6
71 Վա՜յ անբաղդ Մայր 16
71 Վաշխառուն եւ գիւղացին 59
72 Վառեցաւ կեանքս սիրեկան 36
73 Վարդի ծառ 12
74 Վոսբորի ալիքը 26
75 Տիրամօր պատկերի դէմ 4
76 Փառաբանութիւն ուսանողին 60
77 Փող 73
78 Փոքրահասակ քոյր իմ 57
79 Քնկիր դուստր իմ Աղաւնեակ 52
80 Օրիորդի հարս գնալը 48

24371
2013